



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.  
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

**Գիտաժողովի զեկույցների ժողովածու**

ԵՐԵՎԱՆ

**ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**2009**

ՀՏԴ 06 : 941 (479.25) : 940  
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (4 Բու)  
Հ 240

ՆԱՅ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ԳԱՆԻՆ

Հ 240 Հայաստան-Բուլղարիա. Անցյալը, ներկան և ապագան: Գիտաժողովի զեկույցների ժողովածու: - Եր.: ԵՊՀ-ի հրատ., 2009 թ., 168 էջ:

«Հայաստան - Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածուն նվիրված է հայ-բուլղարական դարավոր հարաբերություններին: Զեկույցները ներառում են ինչպես պարամական և մշակութային ակնարկներ, այնպես էլ գրական վերլուծություններ:

ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (4 Բու)

ISBN 978-5-8084-1107-4

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.  
© Կազմողների համար, 2009 թ.

Նայ-բուլղարական հարաբերություններն ունեն դարերի պարամություն: Սկզբնական շրջանում դրանք պայմանավորված են եղել այն իրողությամբ, որ Բյուզանդական կայսրությունը հայկական գորամասերն օգտագործում էր Թրակիա բուլղարների դեմ կռվելու համար: Պավլիկյան շարժումը ճնշելուց հետո կայսրությունն սկսեց հայ աղանդավորներին տեղափոխել Բալկաններ՝ նպատակ ունենալով աղանդավորության դեմն առնել: Սակայն Բյուզանդական կայսրությունն իր նպատակին չհասավ, քանի որ հայ աղանդավորներն ավելի հաճախ միանում էին բուլղարներին և կռվում բյուզանդացիների դեմ: Պավլիկյանների անմիջական ազդեցության ներքո Բուլղարիայում ձևավորվում է բոգոմիլների աղանդավորական շարժումը, որը մեծ հետք թողեց թե՛ բուլղարների, թե՛ բալկանյան մյուս ժողովուրդների պարամության մեջ:

Պարամությունը՝ ի դեմս պարամիչ Սրբեփանոս Ասողիկի, մեզ է հասցրել մի հետաքրքիր պարամություն այն մասին, թե ինչպես Բուլղարիայում թագավորել են երկու հայ եղբայրներ: Ասողիկն իր աշխատության Գ հանդեսի ԻԲ գլխում, որը կրում է «Թե՛ զհարոջ չարաչար մահուամբ մեռաւ մեարապօլիտն Սեբաստիոյ. և վասն թագաւորաց Բուլղարաց, որք սպանին զնա» խորագիրը,<sup>1</sup> ասվում է այն մասին, որ վերը հիշված միտրոպոլիտը Վասիլ կայսեր կողմից ուղարկվում է Բուլղարիա՝ խաղաղություն հաստատելու համար: Բուլղարիայի թագավորները խնդրում են իրենց հարս ուղարկել կայսեր քրոջը, սակայն Վասիլը հարս է ուղարկում իր ծառաներից մեկին՝ ներկայացնելով նրան որպես իր քրոջ: Արքունի նաժիշկն ուղարկվեց՝ որպես հարս միտրոպոլիտի հետ միասին: Այս ամենը բացահայտվեց և մետրոպոլիտը դարվեց՝ իբրև շուն և խաբեբա և հրկիզվեց բուլղարական թագավորների կողմից: Պարամիչի հետագա տեղեկություններից երևում է, որ բուլղարական թագավորները եղբայրներ էին, որոնք Կամաձագեր էին կոչվում: Նրանցից ավագի անունը Մամվել էր: Եղբայրները սերում էին Հայաստանի Դերջան գավառից: Նրանց, ինչպես և շարք հայ զինվորականների, Մակեդոնիա էր տեղափոխել Վասիլ կայսրը՝ բուլղարների դեմ կռվելու համար: Սակայն, ինչպես հաճախ այլ դեպքերում, հարմար պահ ընտրելով, եղբայրներն ընդվզում են կայսեր դեմ և գնում են ծառայելու Բուլղարիայի թագավորին, որը, եթե հավատանք պարամիչին, կուրպ, այսինքն ներքինի էր: Հայտնիները շնորհիվ իրենց ա-

ներևակայելի խիզախության և քաջության, դառնում են Բուլղարիայի թագավորի սիրելիները, բարձրանում են նրա աչքում:

Վասիլ կայսրին խիստ գայրացնում է Բուլղարիայի անկախ քաղաքականությունը, ուստի նա պարտերազմ է սկսում բուլղարական թագավորության դեմ, որի ժամանակ էլ գերի է ընկնում Բուլղարիայի թագավորը: Դա էլ պարճառ է դառնում, որ Կամաձագերը իրենց ձեռքը վերցնեն թագավորական իշխանությունը Բուլղարիայում: Ծանր կռիվներ մղելով բյուզանդացիների դեմ՝ նրանք, ինչպես վերը նշվեց, հաղթում են նրանց և դուրս վարում երկրից:<sup>2</sup>

Տաշտրոգ ԻՄ գլխում Աստղիկը նկարագրում է Վասիլ կայսեր կողմից դեպի Բուլղարիա կատարած արշավանքը: Նա մեծ բանակով կարողանում է ռազմակալել Բուլղարիայի կենտրոնական շրջանները: Սակայն դրան ի պատասխան՝ Բուլղարիայի հայազգի թագավորները իրենց ձեռքն են վերցնում անանցանելի լեռնացքները, կիրճերն ու լեռնային ճանապարհները, արդյունքում թշնամին հայտնվում է մի փոսակ բանրի մեջ: Այնուհետև բուլղարական զորքերը թշնամուն ծանր պարտության են մարմնում՝ սրախտոխող անելով նրանցից շատերին: Ներաբրքիք է մեկ այլ իրողություն ևս՝ Բյուզանդիայի կայսրն է հայազգի Բարսեղ կամ Վասիլ Բ-ն, բուլղարական գահակալները հայեր են և Վասիլ Բ կայսրին փրկեցին հայ հեղևակայիներ, որոնք, պաշտպանելով նրան թշնամուց առաջից ու թիկունքից, կարողացան նրան դուրս բերել Մակեդոնիայից, իսկ կայսերական հունական հեծյալ գնդերը ապաշնորհ ձևով ջախջախվեցին՝ ենթարկվելով կողոպուտի: Ավարի ենթարկվեցին թե՛ բյուզանդական բանակարեղը և թե՛ կայսեր վրանը:

Ինչպես փեսնում ենք, Աստղիկը պահպանել է մի գողտրիկ և հեփաբրքիք պարմություն, որի մանրամասները, անշուշտ, կարիք ունեն առավել խոր քննության, քան կատարված է մեր այս փոքրիկ զննուցման մեջ: Պարզվում է, որ նշված դեպքերի մասին փեղեկություններ են պահպանվել նաև Մամվել Անեցու,<sup>3</sup> Մարթեոս Ուռհայեցու<sup>4</sup> աշխատություններում, ինչպես նաև բյուզանդական հեղինակներ Կեղրենոսի ու Զոնարասի երկերում:<sup>5</sup> Մամվել Անեցին բուլղարական թագավորին, որի անունը չի հիշարվում Աստղիկը, կոչում է Կուր և Ալավսիան. «Կալա (Վասիլ Բ կայսրը – Ն. Բ.) զարքայն բուլղարայ գկուրն, որ է Ալասիան»:<sup>6</sup> Մարթեոս Ուռհայեցին էլ իր «Տարեգրութեան» մեջ բուլղարական թագավորին կոչում է Ալավսիան: Նաղորդումները համահունչ են և կարծես թե միայն մեջբերել է գալիս բուլղար թագավորի անունը, որին մենք դեռ կադրադառնանք: Սակայն, ըստ Մամվել Անեցու, բուլղարական թագավորը ունեցել է

կին և երեխաներ, հեղևաբար կասկածելի է դառնում Աստղիկի փեղեկությունն այն մասին, որ բուլղարական թագավորը եղել է Կուր, ինչը հարույկ անուն չէ, մրաձել է փալիս, որ այն պարզապես կուրպ կամ ներքինի արքահայրության աղավաղումն է: Ունի արդյոք այդ անվանումը բուլղարներնում այլ իմաստ, մենք չգիտենք: Եթե ունի, ապա պետք է ենթադրել, որ Աստղիկը պարզապես այն՝ չհասկանալով, նույնացրել է կուրպ բառին: Մենք, այնուամենայնիվ, հակված ենք կարծելու, որ բուլղարական թագավորը, թերևս, կուրպ է եղել և այդ պարճառով էլ թագավորական իշխանությունը պայթարի առարկա չի դարձել և Կամաձագերին հաջողվել է վերցնել թագավորական իշխանությունը առանց որևէ դիմադրության:

Այժմ բուլղարական թագավորի անվան մասին: Ինչպես փեսանք, Աստղիկից երկու դար հետո ապրած հայ հեղինակներ Մամվել Անեցին և Մարթեոս Ուռհայեցին նրան անվանում են Ալասիան: Այս իրադարձությունները ընդարձակորեն պարմող բյուզանդական հեղինակներ Կեղրենոսն ու Զոնարասը հաղորդում են հիշյալ թագավորի մասին, որն ըստ նրանց Ահարոնի որդին էր: Ցավոք, հստակություն չի ստանում թագավորի անունը: Մենք հակված ենք կարծելու, որ բուլղարական թագավորի անունը եղել է ոչ թե Ալասիան, այլ Սլավսիան կամ Սլոսիան, ինչը կարելի է ճշտել ստուգել բուլղարական աղբյուրներով:

Շար կարևոր է ընդգծել, որ բյուզանդական հիշյալ հեղինակները մանրամասն փեղեկություններ են հաղորդում նաք Կոմսի որդիների կամ Կամաձագերի մասին, որոնք հայոց Դերջան գավառից էին: Եթե հայ հեղինակները պահպանել են Կամաձագերից միայն ավագի՝ Մամվելի անունը, ապա բյուզանդական հեղինակները գիտեն նաև կրտսեր եղբոր անունը՝ Մանվել: Պարզվում է, որ Կամաձագեր անունը գալիս է հունարենից, քանի որ բյուզանդացի հեղինակները եղբայրներին կոչում են Comitopules, այսինքն՝ Կամաձագ և ընդարձակորեն նկարագրում են Վասիլ Բ կայսեր Կամաձագերից կրած պարտության և Մերասփիայի միտրոպոլիտի չարարար մահապարիժը Մամվելի կողմից: Ինչ եզրակացության կարելի է գալ: Այսօրինակ բազմաթիվ համընկնումները բոլորովին պարահական չեն, ուստի ելնելով դրանից, միանգամայն արժանահավաք պետք է համարել Սփրեփանոս Աստղիկի փեղեկությունը Բուլղարիայում գահակալած երկու թագավորների մասին: Դա միաժամանակ վառ վկայություն է այն բանի, որ բյուզանդական լծի դեմ արելությամբ լցված հայերը միանում էին բուլղար ժողովրդին՝ նրա Բյուզանդական կայսրության դեմ մղած պայքարում: Շար ավելի ուշ, արդեն XX դարի սկզբների Բալկանյան պարերազմներում հայերը, որոնք հասարակվել էին Բուլղարիա-

յում, բուլղարների հետ մեկտեղ կովում էին օսմանյան բանակների դեմ: Այսօր էլ մեր երկրները մեծապես համագործակցում են այլևայլ բնագավառներում, ինչը երկու ժողովուրդների հեղափոխական հաջողությունների գրավականներից մեկն է:

1. Մրեփանոսի Տարօնեցոյ Աստղկան. Պարմութին րիեգերական, ՄՊբ, 1885, էջ 244-245
2. Աստղիկ, էջ 246-247:
3. Մամվել Անեցի, Հաւաքմունք ի գրաց ւարմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103-104:
4. Մարթնոս Ուռհայեցի, Ժամանկագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 195:
5. Աստղիկ, ծանոթ. թիվ 137, էջ 389:
6. Նույն տեղում:

**БАБКЕН АРУТЮНЯН**

## ЦАРИ-АРМЯНЕ НА БОЛГАРСКОМ ТРОНЕ

Армяно-болгарские отношения имеют многовековую историю. Первоначально они были обусловлены тем, что Византийская империя использовала армянские воинские части в борьбе с болгарами во Фракии. После подавления Павликианского движения империя начала депортировать армянских сектантов на Балканы, чтобы уничтожить сектанство и одновременно создать живой барьер против болгарского натиска на юг. Однако Византийская империя не добилась своей цели, поскольку армяне-сектанты, зачастую объединившись с болгарами, воевали против византийцев. Под непосредственным влиянием павликиан в Болгарии формируется Богомильское сектантское движение, которое оставило большой след в истории болгарского, а также других балканских народов.

Армянский историк Степанос Асолик утверждает, что в Болгарии царствовали два брата-армянина. В третьей части своего труда, в частности 213-ой главе, озаглавленной “Как жестокой смертью умер митрополит Себастии и о болгарских царях, убивших его,”<sup>1</sup> говорится о том, как вышеназванный митрополит Василий был отправлен в Болгарию для установления мира. Болгарские цари просят выдать сестру императора за старшего из братьев, однако император Василий отправляет в Болгарию в качестве невесты вместо своей сестры одну из дворцовых

служанок в сопровождении митрополита Себастии. Обман был быстро раскрыт и митрополит был осужден и сожжен как собака и обманщик болгарскими царями. Из последующих данных историографа становится очевидным, что болгарские цари были братьями и именовались “графские сыновья”. Старшего брата звали Самвел или Самуил. Братья были родом из уезда Дерджан Армении. Их, как и многих армянских военных, переселил в Македонию император Василий для борьбы с болгарами. Однако, как и в других случаях, братья, выбрав удобный момент, выступили против императора и пошли служить болгарскому царю, который, по свидетельству историографа, был “курт”-ом, то есть евнухом. Благодаря своей неопишуемой отваге и смелости стали фаворитами болгарского царя и повысились в его глазах. Императора Василия очень раздражала независимая политика Болгарии и чтобы наказать эту страну он объявляет войну болгарскому царству, во время которой царь Болгарии оказывается в византийском плену. Это и становится причиной, чтобы “комсадзаци” или “графские сыновья” взяли в свои руки царскую власть в Болгарии. После упорных и тяжелых боев с византийцами они их побеждают и вышвыривают из страны.

В следующей 24-ой главе<sup>2</sup> Асолик описывает поход императора Василия в Болгарию. Последний с большой армией успевает оккупировать центральные территории Болгарии. Однако в ответ на это цари-армяне Болгарии берут под свой контроль труднопроходимые перевалы, ущелья и горные дороги, в результате чего враг оказывается как в мешке. В дальнейшем болгарские войска наносят врагу страшное поражение, уничтожив большую часть византийских воинов.

Следует отметить еще одно обстоятельство. Византийским императором был Василий II, армянин по национальности, а болгарскими царями, как уже было сказано, были братья-армяне, и, наконец, императора Василия II спасли армянские пехотинцы, которые, защищая его спереди и со стороны тыла, смогли его вывести из Македонии тогда, когда имперские греческие кавалеристы были разгромлены и разграблены. Были разорены также военный стан византийцев и императорская палатка.

Безусловно, сохранившаяся данная история в труде Асолика нуждается в более детальном исследовании, что не могли сделать мы в этом маленьком докладе. Тем не менее, хочется отметить, что о вышеупомянутых событиях сохранили свидетельства также армянские историографы Самвел Анеци,<sup>3</sup> Матфей Урхаеци,<sup>4</sup> а также византийские авторы

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՅՐՈՒԹՅՈՒՆ, 1876Թ.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Кедрел (Кедрепис) и Зонарас.<sup>5</sup> Самвел Анеци в отличие от Асолика, который не упоминает имени болгарского царя, называет царя “Кут” и “Алавсиан”. “Император Василий II взял в плен болгарского царя Кута, который есть Алавсиан.”<sup>6</sup> Матфей Урхаеци также в своей “Хронологии” называет болгарского царя Алавсианом.

Нетрудно убедиться, что сообщения разных историографов почти повторяют одно и то же и лишь упоминают имя болгарского царя, к чему мы еще вернемся. Однако в этих сообщениях не сходится одно обстоятельство. Согласно свидетельству Самвела Анеци, у болгарского царя есть жена и дети, что ставит под сомнение сообщение Асолика о том, что он был евнухом. Однако кут у Самвела Анеци – не собственное имя, и, возможно, поэтому оно воспринималось как искаженное слово от курт, которое означает “евнух”. Имеет ли кут другое значение в болгарском языке, мы попросту не знаем. И если имеет, то может быть, Асолик не зная этого, идентифицировал его со словом курт. Тем не менее мы склонны считать, что болгарский царь скорее всего был куртом, и именно по этой причине царская бласть не стала предметом борьбы и “графским сыновьям” удалось легко взять царскую власть, не встречая особого сопротивления.

Теперь вернемся к имени болгарского царя. Сведения Матфея Урхаеци и Самвела Анеци относятся к более позднему времени на два века. И как было сказано выше они называют царя Алавсианом. Византийские авторы Кедрепис и Зонарас, довольно просторно описывающие данное событие, сообщают также, что болгарский царь был сыном Аарона. К сожалению, они не сохранили имя царя. В сущности, данных весьма недостаточно, однако мы склонны считать, что болгарского царя звали не Алавсиан, а Славсиан, что, конечно, можно проверить по болгарским источникам.

1. Степанос Асолик, Всемирная история, СПб., 1885, с.244-245
2. Асолик, с.246-247.
3. Самвел Анеци, Сборник из книг историографов, Вагаршапат, 1893, с.103-104.
4. Матфей Урхаеци, Хронология, Вагаршапат, 1898, с.195.
5. Асолик, Примечание N 137, с.389.
6. Там же.

Օսմանյան կայսրությունում այլազգիներից և այլազավաններից մեկի՝ բուլղարների «լիովին կամ մասնակի» ոչնչացման առաջին ծրագիրը ստեղծվեց 1876թ.: Այդ փարվա մայիսի կեսերին բուլղարացի հանրաճանաչ քաղաքական գործիչ ու հրապարակախոս Թորոք Բուրմովը՝ լավ տեղեկացված լինելով բուլղարական ապրիլյան ապստամբության ճնշման նպատակով թուրքական իշխանությունների ձեռնարկած գործողությունների մանրամասներին, հանգեց այն եզրակացության, թե «դժբախտ ազգաբնակչության կոպորածը տեղի է ունենում սուլթանական կառավարության նախապես մրաժված ծրագրով»:<sup>1</sup> Նա այդ ժամանակ գրնվում էր Կ. Պոլսում ու կարարում էր ռուսական դեսպանատան թարգմանչի պարտականությունները: Պարզ է, որ իր այդ դիտարկումը նա կիսել է նաև դեսպան կոմս Ն. Իզմապուևի հետ, սակայն արխիվային փաստաթուղթ այդ մասին չի պահպանվել:

Մայիսյան այդ օրերին նմանափայ, սակայն ավելի հստակ տեղեկություններ գրեթե միաժամանակ սկսում են ստանալ Օսմանյան կայսրության փարբեր քաղաքներում գրնվող բրիտանական և ռուսական դիվանագետները: Նրանք հավաստում էին, որ բուլղարիայի բարձրագույն իշխանություններն արդեն մշակել էին բուլղարների դեմ գործելու որոշակի ծրագիր և համապատասխան ցուցումներ էին տվել բուլղարական նահանգների տեղական իշխանություններին:

Այսպես, Ադրիանապոլսի բրիտանական փոխ-հյուպատոսի ստացած տեղեկության համաձայն կառավարության կողմից հանձնարարականներ են ուղարկվել տեղական իշխանություններին, որոնցով ցուցում է տրվել նրանց «ոչնչացնել բուլղարներին» և սպանել վեց տարեկանից բարձր բոլոր արու մանուկներին: Այդ միջոցառումների նպատակն էր «բնաջնջել ցեղը (race) և սրիպել մնացածներին արտագաղթել»:<sup>2</sup> Այդ կարևոր տեղեկության աղբյուրն էր օսմանյան բյուրոկրատիայի՝ ազգությամբ այրանացի, մի ներկայացուցիչ:

Փիլիպոլիսի ռուսական փոխ-հյուպատոս Նայդեն Գեռովը, երբ նա ժամանակավորապես գրնվում էր մայրաքաղաքում, օգտագործելով իր անձնական կապերը կառավարության անդամներից մեկի հետ, կարողացել էր ստանալ կարևոր լրատվություն, որը միանշանակորեն հաստատում

էր բրիտանացիների տեղեկությունները բուլղարներին բնաջնջելու պլանի գոյություն ունենալու մասին և լույս էր սփռում նրա որոշ կարևոր մանրամասների վրա: Ստորև ներկայացնում ենք այդ հաղորդագրությունը բնագրի լեզվով.

«... Турецкое министерство... приняло решение, под предлогом подавления восстания, уничтожить совсем большие селения и местечки болгарские, жители которых продвинулись больше вперед, а прочие селения и города разорить грабежом башибозуков, лучших из городских жителей погубить тем или другим способом, истребить всю интеллигенцию и не оставить ни одного из учителей, воспитывавшихся в России, закрыть училища и раздавить народ до такой степени, чтобы лишить его всякой возможности оправиться когда-либо и придти опять в нынешнее состояние, чтобы быть опасным для господства турок, и наконец, как можно будет отуречить часть его, чтобы еще больше ослабить его».<sup>3</sup>

Ադրիանուպոլսի ռուսական հյուպատոսության կառավարիչ իշխան Ալեքսեյ Յերեպելը Բուլղարիայում տիրող իրավիճակի մասին իր հեղինակած պաշտոնական գրությունում վերլուծելով թուրքական իշխանությունների գործողությունները՝ հանգում էր Գեռովի տեղեկատվությունը հաստատելու եզրակացությունների:<sup>4</sup> Նա մասնավորապես գրում էր, որ ապստամբության ճնշման քողի ներքո տեղի էր ունենում «քրիստոնյաների ոչնչացում», որ օսմանյան կառավարությունը ձգտում է «լիովին ազատվել բուլղարական ոգուց» և այդ նպատակով իր հիմնական հարվածն ուղղում է հոգևորականների և ուսուցիչների դեմ:<sup>5</sup>

Դժվար չէ նկատել, որ տարբեր աղբյուրներից ստացված այս տվյալները, որոնք տեղ են գտել իրար հետ հակամարտող պետությունների պաշտոնական դիվանագիտական փաստաթղթերում, ըստ էության իրար լրացնում և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ թուրքական կառավարական շրջանակներում իսկապես գոյություն է ունեցել բուլղարներին, որպես էթնիկական խմբի, դիտարկությամբ ոչնչացնելու ծրագիր: Այդ ծրագրի ցեղասպանական բնույթը փարակոսանք չի հարուցում:

Նկարագրելով է համեմատել, թե ինչպես են վարվել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դեսպաններն իրենց ձեռքն ընկած տեղեկությունների հետ: Ն. Պ. Իգնատևը պարզապես կցել էր Փիլիպոպոլսի փոխ-հյուպատոսից ստացված վերը նշված հաղորդագրությունը ցարին ուղարկվող իր գնկուցագրին և ուղարկել «Պերերբուրգ՝ այդպիսով հնարավորինս արագ տեղեկացնելով իր կառավարությանը բուլղարներին սպառնացող վտանգի մասին»:<sup>6</sup>

Դեսպան Ն. Էլիոթն, որի անձնական բարեկամությունը Միդհապ փաշայի հետ ժամանակակիցների համար գաղտնիք չէր, ապա նա, ըստ էության, չէր վստահել այդ տեղեկություններին և Մալոնիկի բրիտանական հյուպատոսին դիմել էր մեծագույն զգուշավորությամբ ձևակերպված «հատուկ խնդրանքով» (sic!). պարզել, արդյո՞ք մահմեդականների հարձակումները քրիստոնյաների վրա կարող են լինել «նախապես պատրաստված հարձակման» արդյունք:<sup>7</sup> Հրապարակված բրիտանական փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ նա այդպես էլ Լոնդոնին տեղյակ չպահեց իր ստացած կարևոր տեղեկության մասին: Դրա պատճառը, թերևս, այն էր, որ նրան հայտնի էր, որ այդ հրեշավոր ծրագրի հեղինակներից էր Միդհապ փաշան, որը հենց նույն Էլիոթի անվերապահ աջակցությամբ ղեկավարում էր սահմանադրական շարժումը մայրաքաղաքում:

Իսկ ռուսական դիվանագիտությանը հաջողվել էր պարզել, որ բացի Միդհապից այդ ծրագրի հեղինակությունը պատկանում էր նաև վերը նշված Նյուսեյն Ավնի փաշային, իսկ վերջնական որոշումը ընդունվել էր կառավարության նիստի ընթացքում:<sup>8</sup> Ռուս դիվանագետները հայտնում էին, որ կառավարության որոշումը վերաբերում էր ոչ միայն բուլղարների բնաջնջմանը, այլ նաև Բալկանյան թերակղզու ողջ սլավոնական ազգաբնակչությանը «սիստեմատիկ կոտորելուն»:<sup>9</sup>

Այդ ամիսներին Կ. Պոլսում գտնվող երիտասարդ ռուս թուրքագետ Վասիլի Սմիռնովը,<sup>10</sup> հենվելով «ստամբուլյան հարաբերություններին լավ ծանոթ մարդկանցից» ստացված տեղեկությունների վրա, տալիս է երեք թուրք պետական գործիչների անունները, որոնք կազմում էին ըստ իր բնութագրման, «բուլղարական սարսափների դժոխային եռյակը»: Բացի Միդհապ փաշայից հիշյալ եռյակի մեջ էին մտնում՝ այդ տարիների խոշոր պետական գործիչ ու ճանաչված բառարանագետ Ահմեդ Վեֆիք փաշան և «նոր օսմանցիների» շարժման առաջնորդներից Ալի Սուավին:<sup>11</sup> Մրանք, ըստ Սմիռնովի, նպատակադրել էին «սիստեմատիկորեն ոչնչացնել իրենց համար արելի բուլղարներին և... համառորեն հետևում են իրենց ծրագրին...»:<sup>12</sup> Ծարունակելով հետաքրքրվել այդ խնդրով՝ ռուս դիվանագետները կարողացան բացահայտել այդ ցեղասպանական ծրագրի մի շարք այլ մանրամասներ: Համաձայն Ռուսե քաղաքի ռուսական գլխավոր հյուպատոս Վ. Ֆ. Կոմենիկովի ստացած տեղեկությունների, կայսրության մայրաքաղաքում Միդհապ փաշայի ղեկավարությամբ գործում է գաղտնի կոմիտե՝ «Մյուսիյուրգե» («Ավել») անվանումով: Ըստ այդ տեղեկության «Մյուսիյուրգեի» թիրախը միայն բուլղարները չէին, նրա նպատակն էր «բարոյապես ու նյութապես» ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը:<sup>13</sup>

Այդ ոճրագործ խմբակի գոյության մասին ռուսական դիվանագի-  
պությանը հայտնի էր դարձել 1876թ. նոյեմբերին: Սակայն ըստ երևույթին  
այն ստեղծվել էր ավելի վաղ, դեռևս այդ նույն փարվա մայիսին, երբ կա-  
ռավարությունը Միդիապի և Նյուսեյն Ավնիի ճնշման ներքո ընդունել էր  
վերոհիշյալ որոշումը՝ բուլղարներին ոչնչացնելու մասին: Նեպագայում,  
Նյուսեյն Ավնիի սպանությունից հետո (նույն թվականի հունիսի 15-ին)  
այն համալրվել էր նոր անդամներով (հայտնի են Վեֆիթ փաշայի և Ալի  
Մուավլիի անունները), սակայն, ինչպես վկայում է հաղորդագրությունը  
«Մյուսիյուրգեի» մասին, Միդիապը պահպանել էր իր ղեկավար դիրքը:

1876թ. երկրորդ կեսի իրադարձությունները վկայում են, որ փեղե-  
կարվությունն այն մասին, թե «Մյուսիերգե» հանցավոր խմբակը նախա-  
պարտաստում է երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչության զանգվածա-  
յին կոտորածներ, համապարասխանում է իրականությանը: Այդ ընթաց-  
քում, օրինակ, մահմեդական հոգևորականության հակաքրիստոնեական  
քարոզչությունը զնալով սաստկանում է: Այդ փաստը արձանագրել է ժա-  
մանակի մամուլը:<sup>14</sup> Նեպոգեպե այն ընդունում է քրստոնյաներին ֆիզիկա-  
կան բնաջնջման ենթարկելու կոչերի ձև: Այդ փաստը չէր վրիպել ռուսա-  
կան դիվանագետների ուշադրությունից: «Խոջաները», - գրում էր դես-  
պան Իզնավրևը ցարին, - սկսում են բացեփրաց հանդես գալ «գյավուրնե-  
րին» ոչնչացնելու կոչերով:<sup>15</sup>

Նկատվում է գործողությունների և քարոզչության որոշակի համա-  
կարգում բարձրագույն իշխանությունների և մահմեդական հոգևորակա-  
նության միջև: Սակայն փարակուսանք չի հարուցում, որ նախաձեռնությու-  
նը պարկանում էր կառավարությանը և պարճառը ոչ թե և ոչ այնքան  
մահմեդական մոլեռանդությունն էր, որը դարեր շարունակ գոյություն ուներ  
Օսմանյան կայսրության մահմեդական ազգաբնակչության միջավայրում,  
այլ երկրի բարձրագույն իշխանությունների նոր քաղաքականությունը բուլ-  
ղարների և այլ քրիստոնյաների նկատմամբ: Այս կարևոր հանգամանքը  
ընդգծել է դեռևս այդ իրադարձությունների մեզ անհայտ ժամանակակիցը՝  
դեսպան Իզնավրևի անձնական ֆոնդում այլ ձեռագրերի հետ պահվող  
անստորագիր վերլուծական փեղեկագրի հեղինակը: Նա գրում է. «Առաջ-  
ներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մահմեդականները, այժմ  
նրանց ճնշում ու ջարդում է կառավարությունը»:<sup>16</sup> Այդ փեղեկագրը կիսում էր  
նաև Իզնավրևը: Պեպերբուրգ ուղարկած իր զեկուցագրերից մեկում նա  
ընդգծում է, որ ուժեղացող մահմեդական մոլեռանդության պարճառը թուր-  
քական կառավարման համակարգի ներկայացուցիչների մեծ մասի գործ-  
ղություններն են՝ ամենավերևում գտնվողից մինչև ամենաստորինը:<sup>17</sup>

Կարելի է արձանագրել, որ ամռան և աշնան ամիսների ընթացքում ոճ-  
րագործ խմբակի ծրագրերը ընդլայնվել էին և սկսել էր նախապարտաստել  
կայսրության ողջ քրիստոնյա ազգաբնակչության զանգվածային կոտորած-  
ներ: Դրա մասին է վկայում ոչ միայն Վ. Ֆ. Կոմենիկովի վերը նշված հաղոր-  
դագրությունը: Դեռևս հոկտեմբերին Իզնավրևը հաղորդում էր Ալեքսանդր  
Գորչակովին, «որ լիովին հիմնավորված է վախը ներքին կոտորածներից»:<sup>18</sup>

Փաստերը վկայում են, որ 1876թ. վերջին ամիսներին թուրքական իշ-  
խանությունները պարտաստվում էին կազմակերպել նոր հայերի լայնածա-  
վալ կոտորածներ: Արդեն հոկտեմբերի սկզբներին հայկական մամուլը ար-  
ձանագրեց հայերի դեմ ուղղված մահմեդական մոլեռանդության ուժեղաց-  
ման փաստը, միաժամանակ զգուշորեն ենթադրելով, որ այդ փեղի է ունե-  
նում փեղակալ իշխանությունների թույլտվության պայմաններում:<sup>19</sup> Նույն  
ժամանակահատվածում թուրքական մամուլը, մասնավորապես կառավա-  
րության շեփորը հանդիսացող «Բասիրեթ» լրագիրը, մեղադրում է հայե-  
րին, թե իբր նրանք՝ Պոլսի պարթիարքի ղեկավարությամբ նախապար-  
տաստում են զինված ապստամբություն,<sup>20</sup> այդպիսով հող նախապարտա-  
ստելով կոտորածի համար: Ռուսական դիվանագիտական հուշագրերը հնա-  
րավորություն են տալիս պարկերացում կազմել այդ ծրագրի որոշ մանրա-  
մասների մասին: Նոկտեմբերին Գորչակովին հղած իր զեկուցագրերից մե-  
կում Իզնավրևը, հենվելով Պոլսո հայ պարթիարքի կողմից իրեն հայտնած  
փեղեկության վրա, գրում է, որ Միդիապը մեղադրել է հայերին, թե իբր  
նրանք մեծ քանակությամբ զենք են գնել արքայազանից և նախապար-  
տաստում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջան-  
ներում, որպեսզի «ապահովեն Ռուսաստանի միջամտությունը»:<sup>21</sup>

Այսպիսով, դժվար չէ եզրակացնել, որ կոտորածն իրականացվելու էր  
հենց այդ պարթիարքի: Նմանությունը «երիտասարդ» կամ «նոր» օսմանցի-  
ների առաջնորդի և երիտթուրքերի պարագլուխների գործելակերպի միջև  
ակնառու է: Ավելորդ չէ նշել, որ Ռուսաստանի գործունե մեծ դեր է խաղացել  
նաև Միդիապի հակաբուլղարական ծրագրերում: Իզնավրևի զեկուցագրե-  
րից մեկում բերված են Միդիապ փաշայի հեղուկալ խոսքերը՝ ուղղված բուլ-  
ղարների ներկայացուցիչներին. «Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի  
վրա, սակայն երբ նա վերջ է վերջո կգա, նա կգորնի միայն ավերակներ»:<sup>22</sup>

Նոյեմբերի վերջերին Կ. Պոլսի ռուս դեսպանը մեկ անգամ ևս հայտ-  
նեց Պեպերբուրգին, թե հյուպատոսները հաղորդում են, որ Օսմանյան  
կայսրության ողջ փարածքի վրա շարունակվում է քրիստոնյաների «ա-  
ղաղակող ճնշումը», ընդ որում, ոչ միայն սլավոնների, այլ նաև «Փոքր  
Ասիայի քրիստոնյաների»:<sup>23</sup>



Ահա այս պայմաններում էր, որ Կոնստանդնուպոլսի Վանի դեկրետների 1-ի հայերնի հրկիզումը՝ կազմակերպված Կոնստանդնուպոլսի թուրքական իշխանությունների կողմից: Այդ իրադարձությանը հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է, սակայն դիտարկել է այն որպես մեկուսի երևույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է իր կոնֆիդենցիալ զեկուցագրում Իգնատիոս վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անիստոս, որը Միդիայի օգնականն էր, անձնական թարգմանիչը և այդպիսով լավատեղյակ էր երկրի անցուցարձին, այդ թվում նաև այնպիսի իրադարձություններին, որոնք իշխանությունները պահում էին գաղտնի: Հայերնի է, որ թուրքական կանոնավոր բանակը իրականացրեց «գազանություններ Յոզղայի հայկական գյուղերում»:՝<sup>24</sup> Անտարակույս, բանակը ստացել էր համապատասխան հրաման, հեղափոխություն, կարելի է եզրակացնել, որ հայերի դեմ նախապատրաստվող կոտորածի վրանգը բավական իրական էր:

Ի մի բերելով փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ թուրքական բարձրագույն իշխանությունների հակազդեցությունը 1876թ. Բուլղարիայում ծավալված ազգային-ազատագրական շարժմանը իր մեջ պարունակում էր ցեղասպանության քաղաքականության որոշակի փայտեր: Մասնավորապես բրիտանական ու ռուսական դիվազիպական փաստաթղթերի քննությունը՝ ցեղասպանագիտության լույսի ներքո, հնարավորություն տվեց բացահայտելու բուլղարներին, որպես առանձին էթնիկական միավորի, ոչնչացնելու ծրագրի գոյությունը:

Այդ ծրագիրը, ինչպես տեսանք, կազմվել էր մի խումբ թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից և հավանության արժանացել կառավարության կողմից՝ ստանալով այդպիսով պաշտոնական փաստաթղթի կարգավիճակ: Ի կարարումն այդ ծրագրի համապատասխան ցուցումներ են տրվել տեղական իշխանություններին: Այսպիսով, թուրքական իշխանությունների կողմից բուլղարների դեմ իրականացված գործողություններում առկա է դիտարկության հանգամանքը: Վերընշվածը ցույց է տալիս, որ թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876թ. բուլղարական ապստամբությանը պարունակում էր հստակ արտահայտված ցեղասպանական դիտարկության հանգամանք, ինչը հնարավոր է դարձնում բնութագրել այն որպես միջանկյալ փուլ կոտորածի և ցեղասպանության քաղաքականությունների միջև:

Ներազայում, 1876թ. աշնանը այդ խմբի հանցավոր ծրագրերն ընդլայնվեցին և սկսեցին վերաբերել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը, այդ թվում, նաև հայերին:

Ուշագրավ է, որ բոլոր երեք վկայություններն էլ, որոնք պարունակում են տեղեկություններ այդ խմբի մասին, հիշատակում են Թուրքիայի հայրենի պետական գործիչ և սահմանադրական շարժման առաջնորդ Միդիայի փառայի անունը, իսկ փաստաթղթերից մեկը ուղղակի նշում է, որ այդ խմբի ղեկավարը նա էր:

Գոյություն ունեն նաև այլ վկայություններ, որոնք հաստատում են, որ Միդիայի՝ քրիստոնյաների և մահմեդականների միջև «եղբայրություն և հավասարություն» հաստատելու անհրաժեշտության մասին հրապարակայնորեն արվող հայտարարություններն ընդամենը քաղաքական շղարջ էին և քողարկում էին նրա բուն հայացքները: Այսպես, օրինակ, Միդիայը, համաձայն նրան անձամբ ճանաչող ֆրանսիացի Բենուա Բրունսվիլի, իրականում այն կարծիքին էր, որ թուրք ղեկավարների ներկա սերնդի «նախնիները սխալվեցին՝ չստիպելով մեր հայրականներին... ընդունել իսլամ: Դա պետք է սկսել: Այսուհետև պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները, որպեսզի փոխենք ի օգուտ մեզ երկու կրոնների [ի նկատի ունի իսլամը և քրիստոնեությունը - Ռ. Մ.] միջև գոյություն ունեցող թվային հարաբերակցությունը»:՝<sup>25</sup>

Այդ գործիչը, որը համարվում է Թուրքիայի պատմության ամենաառաջադեմ և լուսավորյալ պետական այրերից մեկը, իրականում հիմք դրեց այն ցեղասպան քաղաքականությանը, որ փասնամայակներ անց վարեցին հայ ժողովուրդի դեմ Աբդուլ Համիդը, երիտթուրքերն ու քեմալականները:

Միդիայի և նրա գործակիցների հրեշավոր ծրագրերը չիրականացան: Նրանք չհասցրեցին գործի դնել «ավելը» և «մաքելը» բուլղարներին ու քրիստոնյաներին ընդհանրապես: Սակայն չանցած երկու տասնամյակ՝ թուրքական իշխանությունները՝ ի դեմս սուլթան Աբդուլ Համիդի և նրա հանցավոր գործակիցների, մշակեցին ցեղասպանության նոր ծրագիր՝ գոհ ընկրելով հայ ժողովուրդին: Այս ծրագիրը նախապատրաստված էր ավելի մեծ հեղափոխականությանը և իրականացվեց անհամեմատ ավելի մեծ «մասշտաբով», որի հետևանքով հայերի կորուստները շուրջ փաստ անգամ ավելի մեծ էին, քան թե բուլղարներինը: Թուրքական իշխանությունները շարունակում էին «հմտանալ» այդ ոճրագործ ոլորտում...

1. Տե՛ս նրա նամակը պարմաբան պրոֆեսոր Նիլ Պոպովին, որը միաժամանակ Մոսկովյան սլավոնական կոմիտեի քարտուղարն էր. Письмо болгарского журналиста Т. Бурмова Н. А. Попову, 1876г. мая 15. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. Москва, 1961, с.222.

2. J. H. Dupuis to H. Elliot, May 19, 1876. – In: *The Near and Middle East, 1856-1914 Part I: British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876.* Editor: D. Gillard. Bethesda, 1985, p. 234.
3. Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил.к предыд. – Архив Внешней Политики России (АВПР), ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об – 160. Գեորգի անձնական արխիվում պահպանվել է այդ փաստաթղթի մեկ այլ օրինակ, որը ժամանակին հրատարակվել էր Բուլղարիայում: Այն էականորեն չի փոփոխվում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող օրինակից: Տես. Доклад Герова. Константинополь, май 1876г. - Документы за българската история. Т. 2: Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 168-169.
4. Записка о положении в Болгарии, 25 мая/6 июня 1876г. – АВПР, ф. Канцелярия, 1876, д. 29, лл. 295 - 299.
5. Նույն փեղում:
6. М.П. Игнатъев - Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 148 - 154.
7. H. Elliot to J. E. Blunt. – In: *The Near and Middle East, 1856-1914 Part I: British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876.* Editor: D. Gillard. Bethesda, 1985, p. 238.
8. Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил.к предыд. – АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об.
9. Из донесения Н. Даскалова (Варна) генеральному консулу России в Русе В. Т. Кожевникову, 24 августа 1876 г. – В кн.: По следите на насилие: Документы и материалы за налагане на ислам. Част първа. Съставител Петър Петров, София, 1987, с. 184.
10. Վերադարձված հայրենիք, Վ. Մմիրնովը ծավալեց բեղմնավոր գիրա-մանկավարժական գործունեություն և դասվեց ռուսական թուրքագիտության ճանաչված դեմքերի շարքին: Նրա գիրական գործունեության ու պարունակի փական հայացքների մասին փես. А. С. Твертинова. В. Д. Смирнов – историк Турции (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, 4, с. 103-114.
11. В. Смирнов, Официальная Турция в лицах. Stambul und das moderne Tьrkenthum. Politische, sociale und biographische Bilder, von einem Osmanen, Leipzig, 1877. - Вестник Европы, 1878, кн. 1, с. 311.
12. Նույն փեղում:
13. В. Ф. Кожевников - Н. П. Игнатъеву, 12 ноября 1876 г., Приложение. – Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. Москва, 1961, с.509.
14. Տես, օրինակ. Մեղու Նալասարանի, 3 հուլիսի 1876:
15. Игнатъев-Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л.153об
16. "Записка (без подписи) "О смысле кризиса, происходящего в настоящее время в Турецкой империи и о влиянии происходящих в ней реформ на ее государственный строй". – Государственный Архив РФ (ЦГАОР СССР), ф. 730 (фонд Н.П.Игнатъева), оп. 1, ед. хр. 706.
17. Игнатъев-Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 150.
18. Игнатъев-Горчакову, 13/25 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 27.
19. Տես «Մեղու Նալասարանի», 2 հոկտեմբերի, 1876:
20. Այդ մասին հաղորդում էր նույն «Մեղու Նալասարանի» լրագիրը իր հոկտեմբերի 23-ի համարում, հղելով Պոլսո «Նորագիրը»:
21. Игнатъев-Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л.137об – 138.
22. Игнатъев-Гирсу, 24 мая/5 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л.153об.
23. Игнатъев-Горчакову, 18/30 ноября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 539-539об.
24. П. Анино - Н. П. Игнатъеву, 1876. – Государственный Архив РФ, ф. 730 (фонд Н.П.Игнатъева), оп. 1, ед. хр. 917.
25. В. Bruswick. La vйritй sur Midhat Pacha. Paris, 1877, p. 4.

**ԱՐՄԽ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՆԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՂԱՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ  
19-ԲԳ ԴԱՐԻ ՈՒ ԿԵՄԻՆ**

1853-1856թթ. Ղրիմի պարերազմով Արևելյան հարցը թևակոխեց նոր ժամանակաշրջան: Ռուսաստանն այս պարերազմում պարտություն կրեց, և Թուրքիան, Եվրոպական տերությունների հովանավորությամբ, միգուցե պահպանեց իր փորձաքային ամբողջականությունը, այլև որոշ նվաճումներ կարարեց: Մակայն դա չհուսալքեց Թուրքիայի քրիստոնյա հպարակներին: Ինչպես բալկանյան ժողովուրդները, այնպես էլ հայերը շարունակեցին ազգային-ազատագրական պայքարը:

19-րդ դարի 60-70-ական թթ. բուռն թափով ապստամբական փրամադրություններ էին հաստանում հարկապես Բուլղարիայում: 1876թ. Բուլղարիայի ապրիլյան ապստամբությանը մասնակցեցին և օժանդակեցին բազմաթիվ հայեր:

Պոլսահայ փապագրիչների ջանքերով այսպեղ բուլղարերեն լեզվով հրատարակվում էին բազմաթիվ գրքեր, փարեգրքեր ու ամսագրեր, որոնք պոռպագանդում էին բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարները: Հայ փապագրիչներից Թադևոս Տիվիթճյանը, որը Կ. Պոլսի բուլղարական առաջին փարարանի հիմնադիրն ու փնտրենն էր, լույս էր ընծայում նաև անլեզու գրականություն, ինչպես նաև կոչեր ու թռուցիկներ և ինքն էլ փարածում Բուլղարիայում:<sup>1</sup>

1876թ. ապրիլյան ապստամբությունը թեև վաղօրոք նախապարտաստված էր՝ կուրակվել էր զենք ու զինամթերք, պարտաստելով ինքնաշեն հրանոթներ, սակայն դրանք բավարար չէին, իսկ ապստամբները զինվորական փորձ չունեին: Չհաջողվեց մշակել ապստամբության վերջնական պլանը: Նախափեսայել էր ապստամբությունը սկսել մայիսի 1-ին, սակայն բռնկվեց այն հանկարծակի, ապրիլի 20-ին՝ Կոպրիվշիցում, մարտությանը սկսված ձերբակալությունների պարճառով: Շուտով այն ընդգրկեց հսկայական փարածք՝ սպառնալով դառնալ համաբալկանյան հեղափոխություն: Մակայն մայիսի 20-ին Խրիստո Բոսլեի 175 հոգուց բաղկացած խմբի ջախջախումովն ավարտվեց՝ խեղդվելով արյան մեջ: Սպանվեց բուլղարական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Խրիստո Բոսլեը: Թուրքերը կոտորեցին մոտավորապես 30 հազար բուլղարների (ըստ այլ աղբյուրների՝ գոհվեց 45 հազար մարդ):<sup>2</sup> Հայտարարվոր բնակավայրեր ջնջվեցին երկրի երեսից:<sup>3</sup>

Պահպանվել են բազմաթիվ փնտրություններ ապստամբությանն ակրիվորեն օժանդակած հայերի մասին: Շատ հայեր իրենց կյանքը վրանգի ենթարկելով փրկում են բուլղար հեղափոխականների կյանքը: Նիշարակման են արժանի Ռուչուկի Արիստակես քահանայի, Հարություն Կրիթովի և այլոց արիությունն ու մարտուցած ծառայություններն այդ օրերին:<sup>4</sup> Նրանցից էր բուլղար լուսավորիչ-բանաստեղծ Նայդեն Գերովի մտերիմ բարեկամ, պլովդիվցի հայրենի վաճառական Արթին Գեղիկովը, հայրենի նաև Խոջա Արթին կամ Մոսկով Արթին (ռուսական հասարակական շրջաններին մոտ կանգնած լինելու համար) անուններով: Մրեղնոգորակի ապստամբության ժամանակ Արթին Գեղիկովին հաջողվում է փրկել կախաղանից 52 բուլղար ապստամբների:<sup>5</sup>

Պլովդիվի պեպրական պարկերասրահում պահվում է Գեղիկովի դիմանկարը, որը, ըստ Կ. Ճինգոլյանի ուսումնասիրությունների, նկարել է ապստամբության օրերին թուրք դահիճների ձեռքից նույնպես Արթինի ջանքերով փրկված բուլղար անվանի նկարիչ Ստանիսլավ Դոսպենկին:<sup>6</sup> Ենթադրում ենք, որ Արթին Գեղիկովի ծառայությունները սրանով չեն սահմանափակվել: Նայդեն Գերովը Ռուսաստանում կրթություն ստանալուց հետո վերադառնալով Բուլղարիա, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հանձնարարությամբ Պլովդիվում բացել էր ռուսական հյուպատոսություն և նշանակվել հյուպատոս:<sup>7</sup> Նրա պարտականություններից մեկն էլ ռուսական արթունիքին հավաստի լուրեր ուղարկելն էր: Եվ քանի որ պաշտոնական գործակալների միջոցով միշտ չէ, որ հնարավոր էր թուրքական իշխանությունների ու Եվրոպական դեսպանների գործունեության մասին ճիշտ և թարմ լուրեր ստանալ, օգտվում էին նաև փրկացի վստահելի անձանց ծառայություններից: Կարծում ենք, որ Արթին Գեղիկովը, օգտագործելով իր հեղինակությունն ու լայն կապերը, նման ծառայություններ է մատուցել Նայդեն Գերովին:

17 բուլղար երիտասարդների է կախաղանից փրկել Խաչեր Վարդազարյանը՝ Պետրոշիցա գյուղի զինված ապստամբության ճնշման ժամանակ: Բուլղարիայի ազատագրումից հետո, 1879թ. Պետրոշիցա գյուղի ավագների խորհուրդը նրան պաշտոնական շնորհակալություն է հայտնել:<sup>8</sup>

Հայրենի են հայերի այլ անուններ ևս՝ Հովհաննես Ալաջաջյան, Գևորգ Ռուչուկյան (Թադևոս Պողոսյան) և ուրիշներ, որոնց մարտուցած ծառայությունների մասին հարգանքով և երախտագիտությամբ են խոսում բուլղարները: Բուլղար գրող Նիկոլա Աթանասովը հայերի մասին գրել է. «Նրանք մեզ մոտ եկան ոչ թե իբրև խղճով ու ողորմելի արարածներ, այլ հայարար այն գիտակցությամբ, որ ամեն ինչ գոհել են իրենց անկախության համար և պարտաստ են ուսուսի կռվելու բոլոր նրանց հետ, ովքեր գիտեն մեռնել իրենց ազատության համար»:<sup>9</sup>

Արևելյան Հայաստանի և Թիֆլիսի հայերը Մոսկվայի ու Պետերբուրգի սլավոնական կոմիտեների միջոցով, որն ի դեպ միակ թույլատրելի ճանապարհն էր, դրամական օգնություն էին ցույց տալիս բուլղար ապստամբներին: Ինչպես հաղորդում է «Մշակը», հայերը Թիֆլիսում կազմակերպում էին վճարովի երեկոներ, համերգներ, թատերական ներկայացումներ, դասախոսություններ, զբոսանքներ, հանգստակություն էին անում և ստացված ամբողջ դրամն ուղարկում բուլղարներին: Մեկ անգամ ուղարկված դրամը, օրինակ, կազմել է 1698 ռուբլի:<sup>10</sup> Սլավոնական կոմիտեներն այդ դրամով ոչ միայն անհրաժեշտ իրեր էին գնում ապստամբներ-

րի համար, այլև զենք ու զինամթերք:<sup>11</sup> Քանի որ այդ կոմիտեները համարվում էին բարեգործական կազմակերպություններ, կառավարությունը նրանց գործողությունների համար պարասխանաարվություն չէր կրում և թույլ էր տալիս ազատ գործել:

Ապրիլյան ապստամբության ճնշումից հետո կենդանի մնացած և ձերբակալությունից խուսափած բուլղար հեղափոխականների մի մասն անցավ Ռուսինիա ու Սերբիա, որտեղ հասունանում էին թուրքիայի դեմ պայքարազմական փրամադրությունները:

Ցարական կառավարությունը նախապարաստվեց աջակցել ապստամբներին, և 1877թ. ապրիլի 12-ին, այն բանից հետո, երբ թուրքիան մերժեց Կ. Պոլսում հավաքարմագրված դեսպանների միջազգային կոնֆերանսի նախագիծը՝ ինքնավարություն տալ ապստամբած Բոսնիային, Ներքեզովինային և Բուլղարիային, պարերազմ հայտարարեց նրան: Սկսվեց 19-րդ դարի ռուս-թուրքական վերջին պայքարազմն ու բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վճռական փուլը:

Պարերազմից առաջ Բալկաններում Օսմանյան կայսրության լծի փակ էին Բուլղարիան, Բոսնիան, Ներքեզովինան, Ալբանիան, Էպիրոսը և Թեսալիան: Չեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան թեև ինքնավարություն ունեին, սակայն շարունակում էին մնալ թուրքական գերիշխանության փակ: Իրադարձությունների այս շրջանում նորից վառվեց թուրքական լծից ազատագրվելու հայ ժողովրդի ոգին:

Ինչպես Ջ. Ղասաբյանն է նշում, «պարերազմի ընթացքում բազմաթիվ բուլղարահայեր, որոնք գրկվում էին թուրքական վարչական ծառայության մեջ և բանակում, լքում էին իրենց պաշտոնն ու ծառայությունը և անցնում ռուսական բանակի կողմը»:<sup>12</sup> Պարերազմական գործողություններին մասնակցելու համար, պարերազմի ընթացքում մոտ երկու հազար հայեր Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի փարբեր վայրերից եկան Բուլղարիա:<sup>13</sup> Ռազմական գործողություններին մասնակցելուց բացի, հայերը նաև նյութական ու բարոյական աջակցություն էին ցույց տալիս բանակին ու աշխարհագորին:

Տայեր կային նաև Ռուսաստանի կողմից պարերազմին մասնակցող ռումինական, սերբական և բուլղարական բանակների կազմում: Նրանցից շատերն աչքի ընկան ճակատամարտերում և արժանացան բարձր պարգևների:

1877թ. ապրիլի 12-ին ռուսները երկու ճակատներում էլ անցան հարձակման: Գլխավոր իրադարձությունները ծավալվում էին Բալկանյան ճակատում: Նախօրոք ձեռք բերված համաձայնությամբ նրանք մտան

Ռումինիա, իսկ հունիսի 27-ին անցան Դանուբն ու մարտական գործողություններ ծավալեցին Բուլղարիայում: Նամառ մարտերից հետո՝ գրավելով Սվիշտովը (Սվիստով), ռուսական բանակը հարձակումը շարունակեց նախորդ պարերազմներից ծանոթ երեք հիմնական ուղղություններով՝ Ռուջուկի, Թրեռնովոյի և Նիկոպոլի:

Նույնիսի 8-ին ռուսական մի հեղանակային դիվիզիա առանց նախապարաստությունների գրոհեց Պլենայի ամրոցը, սակայն՝ մեծ կորուստներ կրելով նահանջեց: Նույնիսի 18-ին գեներալ Կրիդեները կրկնեց գրոհը և նորից անհաջող: Այս գրոհի ժամանակ սպանվեցին 120-րդ Սերպուխովյան գնդի շարքս-կապիտան Բաժբեուկ-Մելիքովը, վիրավորվեցին 121-րդ Պենգայի գնդի կապիտան Պողոսովը, 3-րդ հեծելազորային Ելեցյան գնդի մայոր Ալանովը:<sup>14</sup> Պլենայի հաջորդ գրոհի ժամանակ օգոստոսի 30-31-ին գոհվեց Լիբավյան 6-րդ հեղանակային գնդի կապիտան Լուդիս-Մելիքովը, իսկ նոյեմբերի 28-ին՝ ամրոցի գրավման ժամանակ՝ 3-րդ Գրենադերային հրետանային բրիգադի կապիտան Մարկոսովը:<sup>15</sup>

Պլենայի երրորդ գրոհին մասնակցեցին նաև ռումինական զորքերը, որոնց կազմում էր ռումինական բանակի հայազգի սպա Միխայիլ Չերքեզը (1839-1894): 1877թ. նոյեմբերի 28-ին, երբ թուրքական սրվար գորագունդը Օսման փաշայի հրամանատարությամբ ճեղքման անհաջող փորձ կատարեց՝ շրջապարտումից դուրս գալու և դեպի Սոֆիա փախչելու համար, Պլենան հանձնվեց:

Ըստ Ս. Քոլանջյանի ուսումնասիրությունների, պարտված Օսման փաշան իր սուրը հանձնել էր Մ. Չերքեզին:<sup>16</sup> Նա այս պարերազմում արժանացավ գեներալի կոչման: Մ. Չերքեզն աչքի է ընկել նաև Սնըրդանի ճակատամարտում:<sup>17</sup>

1877թ. հուլիսի 19-ի թիվ 45 հրամանով 8-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար գեներալ իշխան Մանվելովը նշանակվում է 13-րդ բանակային կորպուսի գլխավոր ուժերի հրամանատար: Նրա փրամադրության փակ են դրվում 35-րդ հեղանակային դիվիզիայի 3 գնդեր 3 հրետանային մարտկոցներով, Դոնյան թիվ 8 գնդի երեք հարյուրակ և կորպուսի հրետանու չորս մարտկոց:<sup>18</sup>

Օգոստոսին գեներալ Մանվելովի գլխավոր ուժերը համալրվում են նոր միավորումներով և օգոստոսի 29-ին նա որոշում է հակառակորդի ուժերի բանակի և փեղաբաշխման մասին ավելի հստակ պարկերացում ստանալու նպատակով կեղծ գրոհ ձեռնարկել Երենջիկի, Աբլավի, Վոդիցայի և Կովաչիցայի ուղղություններով: Այդ գորաշարժերը փայլուն կերպով իրականացվում են օգոստոսի 31-ին:<sup>19</sup>

Սեպտեմբերի 4-ին իշխան Մանվելովը նշանակվում է Կապրիվիցայի մոտ գտնվող գործերի հրամանատար,<sup>20</sup> իսկ սեպտեմբերի 18-ին՝ XIII կորպուսի առաջավոր գծի հրամանատար:<sup>21</sup>

Սեպտեմբերի 22-ին գեներալ-լեյտենանտ իշխան Մանվելովը կրկին կեղծ հարձակում է ձեռնարկում Պիզանցի և Տուրլակի ուղղությամբ, նաև նպատակ ունենալով վնասել հակառակորդի հաղորդակցության ուղիները և Ռուշչուկ-Ռազգրադյան երկաթուղին:<sup>22</sup> Նույնպիսի մի գորաշարժ է իրականացվում նոյեմբերի 22-ին Սոլենիկի և Կոնստանցի ուղղությամբ, որը հնարավորություն տվեց իշխան Մանվելովին, որ այդ ժամանակ Ռուշչուկյան ողջ ջոկատի առաջավոր գծի հրամանատարն էր, ճշտել հակառակորդի հիմնական ուժերի կենտրոնացման ուղղությունները՝ խուսափելու ռուսական առանձին ջոկատների շրջափակումից:

Ռուսական բանակի 1-ին հեծելազորային դիվիզիայի հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Դոխտորովը, որը օգոստոսի 3-ին հրաման է ստանում իր դիվիզիայի հետ մեկնել Դանուբյան գործող բանակ:<sup>23</sup> Սեպտեմբերի 29-ին նա նշանակվում է Կալարաշյան ջոկատի պետ, որի մեջ մտնում են բացի 1-ին հեծելազորային դիվիզիայից, Օմսկյան 96-րդ - հեծակային գունդը, 2 հրետանային մարտկոց, Դոնյան կազակական 40-րդ գունդը և Դոնյան կազակական թիվ 4 մարտկոցի դասակը:<sup>24</sup> 1-ին հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատարն ու Օլպենիցի ջոկատի պետն էր գեներալ-մայոր Աբամելիքը:<sup>25</sup>

Ներոսական էր հասկանալի 1877թ. օգոստոսի 9-ին սկսված Շիպկայի պաշտպանությունը, որը մեծ նշանակություն ունեցավ պարտերազմի ընթացքի համար: Փոքրաթիվ ռուսական ջոկատը բուլղարական աշխարհագորայինների հետ, ընդհանուր թվով շուրջ 6 հազար հոգի, օգոստոսի 9-13-ը՝ անձնագոհ կերպով պաշտպանեց լեռնանցքը Սուլեյման փաշայի 27 հազարանոց բանակի գրոհներից՝ օրական հետ մղելով 10-14 կապտոլի հարձակում, մինչև օգնության հասավ ռուսական 14-րդ հեծակային դիվիզիան: Լեռնանցքի պաշտպանությունը շարունակվեց չորս ամիս: Դրա շնորհիվ հնարավոր դարձավ գրավել Պլենան, թուրքական գորգերից ազատագրել ամբողջ Նյուսիսային Բուլղարիան և ռուսական հիմնական ուժերը նետել Նարավային Բուլղարիա:<sup>26</sup>

Շիպկայի պաշտպանության մասնակիցների մեջ էլ հայեր կային: Վերոհիշյալ ցուցակներից մեկում նշվում է թուրքական առաջին գրոհի հետ մղմանը մասնակցած 3-րդ հրաձգային գումարտակի մայոր Լազարևի անունը, որը գոհվեց 1877թ. օգոստոսի 11-12-ի մարտերում:<sup>27</sup> Շիպկայի պաշտպանները պարզևարովեցին հատուկ արձաթև մեդալներով: Ի

դեպ, պարտերազմում այս պարովին արժանացան նաև Բայազետի պաշտպանները, մինչդեռ պարտերազմի մյուս մասնակիցներն սրացան բրոնզե մեդալներ:<sup>28</sup>

Շիպկայի պաշտպանության ժամանակ աչքի ընկավ 14-րդ հեծակային դիվիզիայի 14-րդ հրետանային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Խուդյակովը, որի մասին գեկուցագրերում գրվել է. «14-րդ հրետանային բրիգադի հրամանատարները, հրաշալի կատարելով իրենց գործը ռմբահարման, հրետանակծության ժամանակ, իրենց սառնասիրտ հնարամտությունն ու անվեհեր քաջությունը դրսևորեցին նաև հակառակորդի հարձակման ժամանակ: Սեպտեմբերի հինգը դրա ամենափայլուն օրինակն է»:<sup>29</sup>

1877թ. հունիսի 15-ին Միստովի մոտ Դանուբի անցման համար սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով, «քաջության համար» մակագրությամբ, պարգևատրվում է 54-րդ Մինսկյան գնդի փոխպորուչիկ Գրիգորի Աջեմովը:<sup>30</sup> Ավելի ուշ՝ օգոստոսի 12-14-ին Շիպկայի լեռնանցքի պաշտպանության համար Աջեմովը պարգևատրվում է սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանով:<sup>31</sup> 1877թ. դեկտեմբերի 28-ի մարտի համար նրան շնորհվում է պորուչիկի կոչում:<sup>32</sup>

Թռնուվոյի ուղղությամբ գեներալ Ի.Վ. Գուրկոյի հրամանատարությամբ գործող ռուսական բանակի հիմնական ուժերի հետ էր գնդի հրամանատար գեղապետ Դոլոխանովը, որն իր գնդով մասնակցել է Գարբուլոյի ազատագրմանը: Երկրասարդ սպա Մակայուտենկոյի նամակներից, որոնք վերջինս հասցեագրել էր իր ծնողներին, պարզվում է, որ գեղապետ Դոլոխանովը ռուսական բանակի մի շարք սպաների հետ Բուլղարիա է փեղափոխվել Սերբիայից 1877թ. մայիսին՝ բուլղարական կամավորական գնդերի կազմակերպմանը մասնակցելու համար: Մակայուտենկոն բազմիցս շեշտում է այն սերն ու հարգանքը, որ գնդի զինվորները փածում էին Դոլոխանովի հանդեպ:<sup>33</sup>

Դեպի Ադրիանապոլիս գեներալ Գուրկոյի գլխավորած հեծելազորային արշավանքի մասնակիցների մեջ էին նաև լեյք-գվարդիական Պավլովյան գնդի եկթասպա Նայկանովը, կապիտաններ Սերվիյանը և Նախվերդովը, որոնք մասնակցեցին Լեռնային և Դաշտային Դուբնյակի, Թեյլի-ժի, Սոֆիայի ու Պլովդիվի գրավմանը:<sup>34</sup>

Սերբական ռազմական ուժերի կազմում է ծառայել ռուսական բանակի հայազգի գեղապետ Դոխտորովը, որը դեռևս պարտերազմից առաջ, 1876թ. հունվարին էր գործուղվել Բելգրադ՝ մասնակցելու սերբական զորամիավորումների ստեղծմանը:<sup>35</sup>

Պարերազմն սկսվելուց հետո, արդեն Ռուսացիայի ջոկարի կազմում, գնդապետ Դոխտորովը ակտիվ հեղափոխական և կազմակերպչական աշխատանք է ծավալել: Նրա գործունեության մասին շարք ուղարկած իրենց հեռագրերում և զեկուցագրերում բազմիցս դրական են արտահայտվել XII և XXIII բանակային կորպուսների հրամանատարները:<sup>36</sup>

Արձանագրված ոչ լրիվ փոխակները համոզիչ կերպով վկայում են, որ պարերազմին բալկանյան ժողովուրդների հետ մասնակցել են նաև փեղի հայերը:

Շարքերը դիմում էին ռուսական զինվորական հրամանատարությանը՝ խնդրելով իրենց ծառայության վերցնել: Պահպանվել է Ռուսացի բնակիչ հայ Կ. Ավանեսովի խնդրագիրը Ա.Մ. Դոնդուկով-Կոբսակովին, որտեղ նա խնդրում է իրեն ընդունել ռուսական բանակում ծառայության:<sup>37</sup>

Պարերազմի հենց սկզբին, 1877թ. ամռանը հայտնի դարձավ վառնացի երիտասարդ Երանոս Կարապետի Երանոսյանի (1844-1877) խիզախությունը: Երանոսյանը Սևծովյան Բալչիկ նավահանգստային քաղաքի հեռագրափոստարան պետն էր: Աշխատանքի բերումով նա փեղեկանում է, որ թուրք բաշիբոզուկները պարտաստվում են կտորել Կավառնայի քրիստոնյա բնակչությանը: Երանոսյանն անմիջապես մեկնում է Կավառնա, զգուշացնում փեղի բնակչությանը և զենքը ձեռքին նրանց հետ կռվում քաղաքի պաշտպանության համար, որտեղ և 1877թ. հուլիսի 19-ին զերի է ընկնում և սպանվում թուրքերի կողմից:<sup>38</sup> Թուրքերի այն հարցին, թե ինչու է կռվում իրենց դեմ, Երանոսյանը պատասխանում է. «Ձգարում եմ ազատ և անկախ հայրենիքի՝ Բուլղարիայի, ուր ծնվել եմ և ուր ցանկանում եմ մեռնել»:<sup>39</sup> Թուրքական լծից երկիրը ազատագրելուց հետո Կավառնայի հասարակական խորհուրդը որոշեց հավերժացնել հերոսի անունը և Երանոսյանի անունով կոչեց քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը:

Պարերազմի սկզբին Պլովդիվի հեռագրարան մեկ այլ ծառայող՝ Պողոս Էլմասջյանը (1860-1932), ծառայության կանչվելով թուրքերի կողմից, լքել էր ծառայության վայրն ու կամավոր անցել ռուսների կողմը: Պլովդիվի գրավումից հետո նա նշանակվեց փեղի զինվորական հեռագրափոստարան կայանի հեռագրավար և մեծ ծառայություններ մատուցեց փեղի բնակչությանն ու ռուսական հրամանատարությանը:<sup>40</sup>

Պարերազմի ժամանակ կախադանից ու հալածանքներից շարք բուլղարների կյանք է փրկել Պլովդիվի նահանգային գրասենյակի կառավարչի գլխավոր քարտուղար, իսկ այնուհետև՝ 1877 թվից Պլովդիվի դատարանի քննիչ Կարապետ Թավադյանը (1842-1895):<sup>41</sup>

Փոստարան ևս մեկ աշխատող՝ Շումենի հեռագրափոստարան պետ, Վառնայի հայ քահանայի որդի Կարապետ Փափազյանը (1850-1940), մի գիշեր հեռագիր ընդունելով իր աշխատակից Կոստակի Միխայլովին մահապատժի ենթարկելու մասին՝ պայմաններ ստեղծեց վերջինիս փախուստը կազմակերպելու և նրան փրկելու համար:<sup>42</sup>

1877թ. հայտնի դարձավ Թաթար-Բազարջիկի հեռագրափոստարան երեսուներեքամյա հեռագրավար Նովհաննես Սվաճյանի (1843-1906) խիզախությունը: Երբ գեներալ Գուրկոն մոտեցավ Բազարջիկին, նահանջող Սուլեյման փաշան հրամայեց զենքի ընդունակ ամբողջ բնակչությանը կտրակել կայարանամերձ Բաշիգարով (Գլավինցա) գյուղի դաշտում: Մի քանի օր նրանց պահեց բաց դաշտում, սուլթանից հեռագիր սպասելով, թե ինչպես վարվի: Նունվարի 2-ի գիշերը՝ Ն. Սվաճյանի հերթապահության ժամանակ, սրացվում է հեռագիրը, որով սուլթանը հրամայում է վառել քաղաքն ու կտորել բնակչությանը: Սվաճյանը վրանգելով կյանքը՝ փոխում է հեռագրի բովանդակությունը և հեռագրարանը հերթապահող թուրք սպային հայտնում, թե սուլթանը «հրամայում է բնակչությանը ձեռք չբռնել, քաղաքը հանձնել անվնաս»: Զաղաքային թանգարանում պահպանվում է հեռագրի իսկական փեղստեղծ հեռագրաժապավենի վրա: Բազարջիկի փողոցներից մեկը կոչվում է Սվաճյանի անունով: Փողոցի սկզբում կանգնեցված է նրա կիսանդրին:<sup>43</sup>

Պարերազմից հետո, 1880թ., Բալկանյան ռազմաճակատի գլխավոր շարքի կողմից գեներալ-մայոր Դոմանովիչի ներկայացրած ցուցակի համաձայն, «ջերմեռանդության համար» արծաթե մեդալներով պարգևատրվեցին Ադրիանապոլսի քաղաքային խորհրդի նախկին նախագահ Գրիգոր Յաղջյանը, քաղաքի վերստուգիչ հանձնաժողովի անդամ Սադան Բարոյանը, Ադրիանապոլսի նահանգային գանձարան քարտուղար Արսեն Մինասյանը, Ադրիանապոլսի ադմինիստրատիվ խորհրդի քարտուղար Իոհան Դերոնյանը, Ֆիլիպոպոլի ոստիկանության քարտուղար Գրիգորի Կարապետովը և ուրիշներ:<sup>44</sup>

Բուլղարիայի ռազմածովային նավատորմում գլխավոր վիրաբույժ է ծառայել պոլսեցի հայտնի բժիշկ Մ. Թյությունջյանը: Նա անձնական կապեր ուներ բուլղարական հայտնի հայրուկ Իլյա Վոյեվոդի և ուրիշ հեղափոխականների հետ: Պարերազմի ժամանակ Մ. Թյությունջյանը Կ. Պոլսից փախչում է Բուլղարիա:<sup>45</sup>

Բուլղարիայի նահանգներում և քաղաքներում ստեղծված բարեգործական «Միասնություն» կոչվող կոմիտեներում նույնպես հայեր էին ընդգրկված, որոնք օգնում էին գաղթականներին: Պահպանվել է Թոռնովոյի կոմիտեի անդամ Իվան Ղասաբովի անունը:<sup>46</sup>

Այսպիսով, ռուսական բանակը բուլղարացիների, սերբերի, ռումինացիների, փեղի ամբողջ քրիստոնյա բնակչության, այդ թվում և հայերի աջակցությամբ և օգնությամբ 1878թ. հունվարին արդեն թուրքերից ազատագրեց Բուլղարիան: Հունվարի 15-17-ին Ֆիլիպոպոլի մոտ ջարդելով Մուլեյման փաշայի զորախումբը, ռուսական բանակը, առանց դիմադրության հանդիպելու, մտավ Ադրիանապոլիս և պատրաստվեց հարվածել Կ.Պոլսին: Բարձր Դուռն շրպապեց բանակցություններ սկսել զինադադարի մասին, որն ստորագրվեց հունվարի 31-ին:

Բալկանյան ռազմաճակատի հաջողությունները մեծապես կախված էին նաև Կովկասյան ճակատի գործողություններից, քանի որ թուրքերն իրենց բալկանյան զորքերին պարենավորում և համալրում էին կայսրության ասիական տիրույթների հաշվին, որոնց շուրափույթ գրավումով թուրքական բալկանյան բանակը կզրկվեր ամեն տեսակ օգնությունից:

Կովկասյան ճակատում 1878թ. փետրվարի 10-ին, Էրզրումի գրավումով և Մուխլաբար փաշայի ջախջախումով, ռազմական գործողություններն ավարտվեցին:

Ինչպես հայտնի է, 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Սան-Ստեֆանոյում, հայ մեծահարուստ Առաքել բեյ Դադյանի ամառանոցում կնքվեց հաշտության պայմանագիրը՝ ռուսական արքունիքում նախօրոք մշակված կետերով:<sup>47</sup> Ի դեպ, Առաքել բեյ Դադյանը վառողի գործարանատեր էր: Նրա տունը ռուսական բանակի գլխավոր հրամանատարի նստավայրն էր, «ուր ռուս զինվորական հրամանատարները հավաքվում էին թեյի, փեղի էին ունենում հանդիպումներ...»:<sup>48</sup>

Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն Բուլղարիան հրոչակվեց ինքնավար իշխանություն՝ ամբողջ բուլղարական և մակեդոնական փարածքներով:<sup>49</sup>

Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը 19-րդ դարում չավարտվեց: Այն պիտի շարունակվեր նաև 20-րդ դարի սկզբին, որին իրենց մասնակցությունը դարձյալ պետք է բերեին մեծ թվով հայեր:

1. Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 514:
2. Տես Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), էջ 27:
3. История Болгарии, т. 1, сс. 276-292.
4. Ներսիսյան Ա.Ն., Բուլղար ժողովրդի պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թվականներին, Երևան, 1978, էջ 170:
5. Ծինգոզյան Կ.Ն., Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից (19-րդ դար), Երևան, 1966, էջ 56, փես նաև Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, հատոր Բ, էջ 118:

6. Ծինգոզյան Կ.Ն., նշվ. աշխ., էջ 56:
7. Никитин С., Возникновение Московского славянского комитета, "Вопросы истории" 1947, N 8, стр. 52.
8. Овнанян С.В., Армяно-Болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX в., Ереван, 1968, չ3 89:
9. "Походъ", 1941, апрель 27, с. 5.
10. «Մշակ», 1876, 26 օգոստոսի:
11. Виноградов В.И., Русско-турецкая война 1877-1878гг. и освобождение Болгарии, М., 1978, с. 76-77.
12. Ղասաբյան Ջ., Էջեր հայ-բուլղարական կապերի պատմությունից, «ՊԲՆ», 1982, N 4, էջ 88:
13. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 665:
14. РГВИА, ф. 485, оп 1, д. 48, лл. 8-8об.
15. Նույն տեղում, թթ. 18, 36:
16. Քոլանջյան Ս., Հայկական արժեքները Ռումինիայում, «Հայրենիքի ծայն», 1985, հոկտեմբերի 30:
17. Հայ ժողովրդի պատմություն, հ 6, էջ 676:
18. "Сборник материалов по Русско-турецкой войнь 1877-1878гг. на Балканскомъ полуостровъ", выпускъ 4, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-исторической комиссии Главного штаба, С. Петербургъ, 1898, сс 11-12.
19. Նույն տեղում, էջ 63-65:
20. Նույն տեղում, էջ 75:
21. Նույն տեղում, էջ 82:
22. Նույն տեղում, էջ 83:
23. "Сборник материалов по Русско-турецкой войнь 1877-1878гг. на Балканскомъ полуостровъ", выпускъ 7, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-истотической комиссии Главного штаба, С. Петербургъ, 1898, с 1.
24. Նույն տեղում, էջ 3:
25. Նույն տեղում, էջ 16:
26. История Болгарии, т. 1, с. 306.
27. РГВИА, ф. 485, оп. 1, д. 48, л 12об.
28. Виноградов В.И., Русско-турецкая война 1877-1878гг. и освобождение Болгарии, М., 1978, с. 115:
29. "Сборник материалов по Русско-турецкой войнь 1877-1878гг. на Балканскомъ полуостровъ", выпускъ 5, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-истотической комиссии Главного штаба, С. Петербургъ, 1898, с 181-182.
30. Նույն տեղում, էջ 371:
31. Նույն տեղում, էջ 391:
32. Նույն տեղում, էջ 418:

33. РГВИА, ф. 485, оп. 1, д. 387, лл. 9-9об., 100-103.
34. Նույն փնդում, գրք 48, թ. 42:
35. Նույն փնդում, գ. 766, թ. 1:
36. "Сборник материалов по Русско-турецкой войне 1877-1878гг на Балканском полуострове", выпускъ 38, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-истотической комисии Главного штаба, С. Петербургъ, 1903, сс. 54, 78, 114, 116, 119, 130, 131, 135, 163, 174, 243, 245, 248, 278, 285, 345.
37. РГВИА, ф. 846, оп. 16, д. 8802, л. 58.
38. "Походъ", 1941, апрель 27, с. 14.
39. Գաբրիելով Վ., Հայերը Բուլղարիայում, «Սովետական Հայաստան», 1966, մայիսի 27, N 113:
40. "Походъ", 1941, апрель 27, с. 14.
41. Նույն փնդում:
42. Овнянян С.В., ЭЯн. աշխ., էջ 90:
43. Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պարմության, հ. Բ, էջ 118, Овнянян С.В., նշվ. աշխ., էջ 116-117, Винаградов В.И., նշվ. աշխ., էջ 223:
44. РГВИА, ф. 430, оп. 1, д. 576, лл. 3-4.
45. Улуян А.А., Апрельское восстание 1876г. в Болгарии и Россия, очерки, АН СССР, изд. "Наука", М., 1978, стр. 192.
46. Տես "Освобождение Болгарии от Турецкого ига", т 3, с. 224-225:
47. Հայ ժողովրդի պարմություն, հ. 6, էջ 107:
48. Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), Երևան, 1972, էջ 142:
49. История Болгарии, т. 1, М., 1954, с. 312-31

### ՀԱՄԱՐԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

#### ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԹԵՐԵՆ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊՈՒԼԻՍ-ԲՈՒԼՂԱՐԱՎՆԱՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19-ՐԴ ԴԴ.

Օսմանյան կայսրությունը, որ կազմված էր 30 նահանգներից, դրանք էլ իրենց հերթին՝ գավառներից (սանջակ) ու գավառակներից (կազա), քաղաքական, սոցիալ-փնդական փարբեր իրավիճակներում են գտնվել: Օսմանյան կայսրության առանձնաշնորհյալ նահանգներ են համարվել՝ Եգիպտոսը, Թունիսը, Բոսնիան, Բուլղարիան, Առևելյան Ռումելիան և Մամուրը:

Բուլղարիան մեզ համար հետաքրքիր է այնքանով, որ այն պարկազանում էր Կայսրության մասամբ հայաբառ թուրքերենով ստեղծագործած որոշակի շրջանների թվին, ինչև արդյունքն էր մի ողբերգական երևույթի, երբ ոցիալ-փնդական, քաղաքական ծանր հետապնդումների հետևանքով բռնի դարձել էր թուրքալեզու հայ ժողովրդի մի հարվածը: Այս հարվածի ողջ ստեղծագործական միտքը մեզ է հասել մասամբ կամ լիովին՝ հայաբառ թուրքերենով: Նրանց ուժացումից փրկելու, դեպի մայր ժողովրդի գիրկը վերադարձնելու, հայախոսությունը վերականգնելու, առաքելական կրոնին հավաքարիմ մնալու կարևոր ինստիտուտ որպես հայաբառ թուրքերենը մեծ առաքելություն ունեցավ: Այն նման էր մահամերձին փրկելու համար արյուն ներարկելուն: Հայաբառ թուրքերենով ստեղծվեց հսկայածավալ ձեռագիր ու փպագիր գրականություն, որը հետագայում այնքան հզորացավ ու ինքնարավ դարձավ, որ սկսեց ծառայել ոչ միայն հանուն իր նախնական առաքելության, այլև դարձավ հայերեն իմացողների ու օտարների համար կարևոր մշակութային գործոն: Գրահարապարակչությունը, պարբերական մամուլն այնպիսի հարուստ ու հզոր ուժ դարձան, որ ակամա սկսեցին ազդել Կայսրության բոլոր թուրքախոս ազգերի մշակույթի վրա, հասանելի ու ցանկալի դարձան փարբեր ազգերի համար: Այն խթան հանդիսացավ Օսմանյան կայսրությունում ընդհանուր զարթոնքի շրջանի բուռն զարգացման, դարձավ եվրոպական իրականության, մթնոլորտի, մշակույթի, առաջադիմական գաղափարների Թուրքիա ներթափանցման գործիք, միջոց: Պետք է արձանագրել, որ այս գրականությունից մանենամեծ օգուտն ունեցավ նախ և առաջ թուրք ժողովուրդը: Հայաբառ թուրքերեն գրքերն ու պարբերականները կարդում էին պալատից մինչև պաշտոնական վայրերում, փարբեր խավերի ընթանիքներում, սրճարաններում ու հարեմներում: Հայկական թարգմանական խմբերի թուրքերենով ներկայացումները ողջ Կայսրությունով մեկ հեղափոխական նշանակություն ունեցան և մշակութային առումով, և գաղափարախոսական: Մեծ էր նվաճումը նաև՝ գիտության, փնդակալի, գրական նոր լեզվի, լուսավորական գրականության ու նրա գործիչների կազմավորման, լրագրողական արվեստի, երաժշտության ու թատրոնի, ամենափարբեր ճյուղերի զարգացման փեսանկյունից:

Այժմ հայաբառ թուրքերեն ձեռագրական ժառանգության մասին, որ գտնվում է Մալեմադարանում: Դրանց թիվն անցնում է շուրջ մեկ փասկայից և ստեղծվել են 1830-70 ական թթ: Մալեմադարանում է գտնվում Մահմեդի Տեր Հարություն Քահանա Պողոսյան Վառնացու կողմից գրված 3 կրոնադավանաբանական բովանդակության ձեռագրեր: Նա



կազմել է առաձանհ, թարգմանել, գրի առել չափազանց հեղափոխիչ ու ժամանակի համար կիրառական բարձրարժեք երեք ձեռագրեր: Դրանցից երկուսը վերաբերում են գյուղատնտեսությանը: Այն է՝ պտղաբույս ծառերի, հացահատիկային կուլտուրաների մշակմանը, պայքար նրանց վնասատուների դեմ, պարարտանյութերի մասին և այլն: Մյուսը՝ մրգերի ու բանջարեղենների պահպանման, մշակման եղանակների մի ողջ դասընթաց է: Նրա հեղինակած մի ձեռագիր՝ բառերի, անունների, մականունների հայերեն ու հայարառ թուրքերեն բառարան է: Մահտեսի Տեր Հարություն Զահանա Պողոսյան Վառնացին հթ է թարգմանել ու գրի առել ևս երեք կարևոր պարսկական գործեր: Դրանցից մեկը վերաբերում է խաչակիրների 1424թ. շրջանի պարսկությանը և կոչվում է «Եղիսաբեթ»: Մյուսը՝ Հուսիսիանոսի գորավարներից Բելիսարիոսի մասին է: Երրորդ ծավալուն պարսկական երկը Կոստանդին Մեծի պարսկությունն է:

Բուլղարիայում դարեվերջին 11 եկեղեցի կար: Սոֆիայում, Վառնայում, Թաթար-բազարչիկում, Բուրգասում, Սիլիստրայում, Կալաչում, Շումայում (Շումեն), Ռուսչուկում, Իսլիմլիեում և Դորբիչում՝ մեկական և 2-ը՝ Ֆիլիպեում (Պլովդիվում) գոյություն ունեին բազմաթիվ դպրոցներ:

Հայկական գաղութը հիմնականում կենտրոնացած է եղել Վառնայում, Ֆիլիպեում և Ռուսչուկում: Վառնան մշակութային մթնոլորտ ունեցող կենտրոն է եղել, իր գրական ավանդույթներով: Մանավանդ 19-րդ դարում, երբ բոլոր տեսակի հասարակական-մշակութային կազմակերպությունները վերելք էին ապրում, Բուլղարիան ևս համաքայլ էր այս զարգացմանը: Պոսառայ գաղութի հետ սերտ կապն իրականացվում էր նաև շնորհիվ հայարառ թուրքերեն պարբերականների, որոնք բաժանորդներ ունեին նաև Բուլղարիայում: Բազմաթիվ հայագի գործիչներ ու մասնագետներ ամենապարբեր ասպարեզներում, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցիչներ աշխարհել են Բուլղարիայում՝ ուղարկվելով կառավարության կողմից: Նրանցից շարքի գործունեությունը նշանակալից է եղել: Օրինակ, Արագործնախարարության ընդհանուր քարտուղար Մահակ Ապրո Չելեպին (1823-1900) 1876-ին Ֆիլիպեում կազմակերպված Արարկարգ խորհրդի անդամ, ապա և նախագահ է դարձել:

Բուլղարահայ գաղութը շար գգայուն է եղել Պոլսի, Արևմտյան Հայաստանի գավառներում կարարվող իրադարձությունների նկատմամբ: 1897թ. մարտի 6-ին Վառնայի թափրոնում հայկական թափրախումբը ներկայացնում է «Կոտորած Մասնա» պիեսը: Հայկական թափրախումբերը, որ Արդուլ Համիդի ժամանակ գրկված էին հայերեն լեզվով ներկայա-

ցումներ փայլու իրավունքից, այս մեծ բացն իրականացնում էին իրենց հյուրախաղերի ընթացքում: Ողջ դասական ու ազգային խաղացանկը, օպերետները ներկայացվում էր նաև բուլղարահայությանը, լավագույն դահլիճներում: Իսկ Բուլղարիայում արդեն կային հայկական թափրախումբեր՝ Վառնայում, Պլովդիվում: Թափրակական ներկայացումներ թուրքերենով դիտել են նաև Բուլղարիայում: Թափրոնի լեզուն հայարառ թուրքերենն էր և ավելի քան 500 պիեսներ, եթե մեծ մասամբ նույնիսկ չեն հրատարակվել, ապա ոչ պակաս նշանակություն են ունեցել Օսմանյան կայսրության թուրքախոս, հիմնականում անգրագետ ու եվրոպական հասկացությամբ թափրոնին նոր-նոր ծանոթացող ունկրնդիրների համար:

1895թ. Դորբիչում հիմնադրվում է հայ կանանց պարախումբը: 1911թ. Ռուսչուկում՝ «Արարապ» սպորտային միությունը, իսկ ավելի ուշ՝ Պլովդիվ, Վառնա, Ռուսե քաղաքներում հիմնադրվում են Հայ մարմնամարզական Ընդհանուր միության մասնաճյուղերը (1921թ.): Դարասկզբին բուլղարահայության զարգացման համար կարևոր ազդակ է լինում 1911թ. Վառնայում և մյուս քաղաքներում ՀԲԸՄ մասնաճյուղերի հաստատումը: 1912թ. հայ զինվորական առաջին դպրոցն է հիմնադրվում Բուլղարիայում:

Առանձնակի հեղափոխություն է ներկայացնում պոսառայ ճարտարապետների համագործակցությունը Բուլղարիայում: Դարեվերջին այսպեղ կառուցվում են լավագույն ճարտարապետական-մշակութային հուշարձանները:

1900թ. Ռուսեյում ճարտ. Նիկողոս Պետրոսյանը կառուցվում է Սիմերնովա առանձնատունը, Մշակույթի պալատը, Ժողովրդական Բանկը, Վառնայի պետական օպերային թափրոնը կառուցում է Հովսեփ Ազնավուրի կողմից: 1898 պոսեցի ճարտ. Լևոն Կյուրեղյանը կառուցում է Վառնայի քաղաքապետարանի թափրոնի շենքը (կա փոստային բացիկ): Նույնը Պոլսում արդեն կառուցել էր Գյումուշտույու փալատը: Նրանք կառուցում են հայկական դպրոցներ, նախակրթարաններ (Վարդանանց արական ու Վառվառյան աղջկանց, 1894թ.): 1901թ.՝ Կարապետ Պիոնյան մասնավոր դպրոցը, 1895թ. Դորբիչում վերականգնվում է Վարդան Մամիկոնյան նախակրթարանը, 1896թ. Սոֆիայում սկսում է գործել նաև Արամյան դպրոցը, կառուցում, վերակառուցում հայկական եկեղեցիները:

Պոլսի Ֆեներ թաղում 1898թ. սեպտեմբերի 8-ին բացվում է Սվեթի Սյրեֆան բուլղարական երկաթե եկեղեցին: Ճարտարապետը ժամանակի հայրնի մասնագետներից՝ Հովսեփ Ազնավուրն էր: Այն ենթակա եկեղեցի էր:

Իհարկե, Բուլղարիայում ևս հեղափոխումներ ու հալածանքներ են եղել ազապ խոսքի համար: Հայ կոմսոցիստների նման այստեղ էլ սուլթաններին, Աբդուլ Համիդին նվիրված քայերգեր են գրվել: Օրինակ, երաժշտության պրոֆեսոր Ժյուլ փոն Կրեցչմանի Երկրորդ բուլղարական ռապսոդիան նվիրվել է Աբդուլ Համիդ Բ-ին: Իսկ 1910թ. Արփիարար Արփիարյանի «Կարմիր ժամուց» գործը Վառնայում փայլելու պարճառով արգելվում է հեղինակի մուրքը Թուրքիա: Բուլղարիայի դաշնակցական կուսակցության հայերեն «Շարժում» պարբերականի գլխ. խմբագիր Վարդան Պարիկյանը Ռուսչուկում սպանվում է րեճոռիստ ընկերների կողմից 1907թ. նոյեմբերի 22-ին: 1908թ. Ֆիլիպետով «Ռազմիկ» թերթի գլխավոր խմբագիր Ռուբեն Զարդարյանը Քասթամունի է արտոբվում և այլն:

19-րդ դարի կեսերից պոլսահայ գործարարները ծխախոտի ֆաբրիկաներ են հիմնում Եգիպտոսում, Հունաստանում, և Բուլղարիայում: 1908թ. Պրովիդիում «Գրիգոր Թովմասյան և որդի» ընկերությունը ծխախոտի ֆաբրիկա է հիմնում: Ֆիլիպետով 1909թ. իրենց մասնաճյուղն են բացում «Մ և Գ. Շամբանճեան ընկր».-ը, որ ամեն րեսակ ու շքեղ կերպասեղենի մեծաքանակ առևրոբվ էր գրաղվում: Եղեռնից հեղտ Մոֆիա հաստարակված Տարուրյան եղբայրները կաշվի մշակման ֆաբրիկա են բացում: Եվ այսպես շարունակ...

1914 Պրովիդիում դոկ. Պեղոս Օրմանյանը հիմնում է առաջին առողջարանը:

Բուլղարիայում ըստ մարենագիտական աղբյուրների 80 հայ արբերականներ են հրատարակվել 10 քաղաքներում: Գրբեր րպագրվել են Մոֆիայում, Պրովիդիում (Ֆիլիպպե) և այլ վայրերում: Կարևորներից մի քանիսը 1909թ. Աբր. Ամիրխանյանը արարբերենից հայերեն է թարգմանում Դուրանը րպում Վառնայում, Դոբրի Թոդորով րպարանում: 1910թ. Վառնայում Արշակ Ալպոյանյանը «Իրավունք» թերթի րպարանում հրատարակում է «Պուկարաց պարմութիւնը. Անոնց ծագումն մինչև մեր օրերը»՝ արարարակված «Բիզանդիոն»-ից: Լյուբֆեյան Տաճարը հրատարակում է «Արևելյան Ռումելիան և հայերը» 34 էջանոց գրքույկը Գրասիրաց րպարանում, (Ֆիլիպպե, 1885թ.): Պոլսում րպագրվել է Զաքարիա Մրոյանուովի մասին գիրքը, որպես հայերենասիրության օրինակ (րես Մարենագիտություն, 1300): Այս և որոշ գրբեր մեզ ծանոթ են մարենագիտական աղբյուրներից: Բարսեղ Թուղլաճիի «Արևմտահայերը պարմության մեջ» գրքում եղած րիպոդոսաթերթերը հաստարարում են նրանց րպագրությունները: Հայատառ թուրբերեն պարբերականների հրատարակությունների կենտրոնը եղել է Վառնան (10 անուն):

Հայատառ թուրբերենով Մոֆիայում րպագրվել են՝

Աստուր Մկրտչյանի հեղինակությամբ, պարկառելի ծավալով (543 էջ) բուլղարերեն-հայերեն-րանկերեն բառարանը, 1904թ. Գ. Չեղոֆի րպարանում: Մա նշանակում է որ հայերեն րատերը եղել են համարյա բոլոր րպարաններին հաստ:

Վառնայում՝ 5 գիրք, հիմնականում կարակերգություն, պիես-թերթոններ, արարարակված հայատառ թուրբերեն մամուլից:

Բուլղարիայում հրատարակված պարբերական մամուլը երբեմն արարահայրվել է երկլեգու, եռակեգու հրատարակություններով: Վառնայում առաջին հթ պարբերականը եղել է

1. «Իրավունք»-ը (1884-1885). հ և հթ: Վառնայի երիտասարդաց մշությունն է հրատարակել Անդրանիկ Եօանեսուովի խմբագրությամբ, րպագրել Ռումինահայ Անդրանիկ Եօանեսուովի րպարանում: Հրատարակել է նաև ֆրանսերեն հողվածներ:
2. «Իրավունք»-ը (1896-1911),<sup>1</sup> Վառնա: Հայերեն այս երկշարաթաթերթը, ապա՝ եոոբյան, իր քաղաքական լուրերի համար ունեցել է հավելված՝ 4-րդ էջ: Մի քանի համար ունեցել նաև բուլղարերեն հավելված էջ: Տպագրվել է «Վաիմնոստ», Դ.Տոդորով և որդիք րպարաններում, մինչ հեղտ ունեցել սեփական րպարան:
3. «Կարակ» Ազգային ու զավեշրական եոոբյա թերթը(1897), Վառնա: Այն րպագրվել է Կ.Նիկոլովի րպարանում, իր էջերում որպես կանոն րպագրել հթ նյութեր:
4. «Այինէի Լիթայիֆ» (Զվարճալի հայելի) Վառնա, (1897). Տպ. «Հայելի» և «Վաիմնոստ»: Տնօրեն՝ Տիրան Փափագյան: Այս զավեշրաթերթը 1897-1903թթ. Վառնայում և 1903-4թթ. Ալեքսանդրիայում հրատարակված «Հայելի» ազգային և զավեշրաթերթ-շարաթաթերթի հայատառ թուրբերեն հավելվածն է եղել:
5. «Տավրոս» (1898) հայ ազգային, քաղաքական, գրական և քննադարական թերթ, որը շարունակությունն է հանդիսացել «Կարակ»ի, րպագրվել «Վաիմնոստ» և Վոյնիկովի րպարաններում, շարունակել հայատառ թուրբերեն հրատարակությունների ավանդույթը, նույն խմբագիր րնօրենի՝ Հարություն Չաքրյանի օրոք :
6. «Շարժում Իվալեսի» երկշարաթաթերթ, 4 էջ: Վառնա, (1901): Տնօրեն՝ Մկրտիչ Վարդան: Տպարան Օրիենտալ (Արամյանի): Հայերեն «Շարժում»-ի քաղաքական լուրերի հավելվածն է: Զարմանալի է, սակայն փաստ է որ զավեշրաթերթերը, րարեցույցը այստեղ որակ են կազմել:

Նամատուր անդրադառնանք մի հայ նշանավոր գործիչ:

Թադեոս Տիվիթճյանը (1810-1878), պոլսահայ, որ փրապետում էր հունարեն, բուլղարերեն, իտալերեն լեզուներին, Օսմանյան կայսրությունում առաջինն էր, որ ձուլեց բուլղարերեն փառերը, փայագրեց բազմաթիվ գրքեր, որոնք ուղարկվում էին Բուլղարիա, մտավորական, հոգևոր սնունդ հասցնում այդ երկրին: Տարին երկու անգամ Տիվիթճյանն ինքն էր ճամփորդում այնպես, որ հակերով գրքեր փանում, որոնց մեծ մասը ապառիկ վաճառում էր ու փարածում: Նա փայագրական գործ էր սովորեցնում բուլղարներին, նպաստելով այդ երկրի ու ժողովրդի լուսավորական գործին: Իրավամբ նրան կոչել են «Բուլղարների Գրիգոր Լուսավորիչ»: Բուլղարական հեղափոխության ժամանակ ծխախոտի թղթի փուփերի կափարիչների վրա ստրկության լուծը թողափելու սրտառույզ կոչ էր փայագրել, որի համար էլ ձերբակալվել էր, փուզանվել: Երախտապարտ բուլղարները ժամանակին սովորություն են ունեցել փարին մեկ անգամ Սոֆիայի Մայր եկեղեցում նրա հոգեհանգիստը կատարել, իրենց ժողովրդի բարերարների հետ միասին ոգեկոչելով նրա անունը: Այսօր՝ չգիտեմ, մնացել է ազդ գագառումը:

### ՆՈՎ ՆՄԵՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ՆԱՅ-ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՀԻՆԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՄԿՋԲԻՆ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության դեմ ծավալված հայ ազատագրական զինյալ պայքարն ընթանում էր արփաքին և ներքին անբարենպաստ պայմաններում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք հանգամանքների պատճառով հնարավոր չէրավ իրական դաշնակիցներ գտնել Արևմտյան Նայաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների շրջանում: Այդ պատճառով հայ ազատագրական պայքարը ղեկավարող ուժերը հարկադրված էին ոչ միայն ակրնկալել փոքրությունների աջակցությունը, այլև հնարավոր դաշնակիցներ որոնել բուն Արևմտյան Նայաստանից դուրս՝ Օսմանյան բռնապետության դեմ պայքարող այլ ժողովուրդների շրջանում: Նման դաշնակից դարձավ թուրքական լուծը նոր թողափած բուլղար ժողովուրդը, որը շարունակում էր պայքարը օսմանյան փրապետության փակ գտնվող Մակեդոնիայի ազատագրման համար:

Նայ-բուլղարական համագործակցությունն անհրաժեշտորեն թելադրված էր մի շարք հանգամանքներով:

Նախ, ակնհայտ էր 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան լծի դեմ բուլղար ժողովրդի մղած պայքարի անմիջական ազդեցությունը հայոց ազատամարտի վրա՝ ինչպես ազատագրական գաղափարների քարոզչության, այնպես էլ՝ ազատագրական պայքարի կոնկրետ ձևերի ընտրության առումով: Ըստ որում, վերջին հարցում կային էական ընդհանրություններ: Նայ ազատագրական ուժերը հաճախ էին կիրառում պայքարի այն ձևերը, որոնք մինչ այդ արդեն փորձարկվել էին բուլղար ժողովրդի կողմից:

Երկրորդ, թե՛ Նայկական և թե՛ Մակեդոնական հարցերը միջազգայնացված էին և Բեռլինի վեհաժողովին հաջորդած փարիսերին իրադարձությունները դրանց շուրջ ընթանում էին գրեթե նույն սցենարով:

Երրորդ, հարկապես 1890-ականների կեսերին՝ արևմտահայերի զանգվածային ջարդերի պայմաններում, Բուլղարիայի քաղաքներում՝ ի հաշիվ արևմտահայ փախստականների, էապես մեծանում է հայերի թիվը: Դա ոչ միայն նպաստում է երկու ժողովուրդների մերձեցմանը, այլև՝ անխուսափելի դարձնում Արևմտյան Նայաստանի և Մակեդոնիայի ազատագրմամբ զբաղվող քաղաքական ուժերի շփումները՝ օրակարգում դնելով նաև հնարավոր համագործակցության հարցը:

Բնական է, որ աշխարհաքաղաքական պատճառներով բացառվում էր հայ-բուլղարական իրական համագործակցությունը Արևմտյան Նայաստանում: Եթե քարոզչական համագործակցության հիմնական ասպարեզ դարձան Արևմտյան և Կենտրոնական Եվրոպան, որտեղ հայկական և բուլղար-մակեդոնական կազմակերպությունները հաճախ սատարում էին միմյանց կամ աշխատում միասնաբար ներկայացնել երկու դատերը, ապա զինական և գործնական այլ համագործակցությունը սահմանափակվում էր Բուլղարիայի, Օսմանյան կայսրության եվրոպական մասի և Կ.Պոլսի շրջանակներով:

Ներաբերքության առարկա ժամանակահատվածում հայ-բուլղարական զինակցությունն առավելապես դրսևորվել է բուլղար-մակեդոնական կազմակերպության և ՎՅԴ-ի համագործակցության փարբերակով: Ըստ որում, փարիսերի ընթացքում այն հիմնականում ունեցել է հետևյալ դրսևորումները.

1. Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների կողմից զինամթերքի՝ առավելապես ռումբերի և պայթուցիկների մատակարարում ՎՅԴ Կ.Պոլսի կառույցին:

2. Կ.Պոլսում համարել խոշոր ձեռնարկ կազմակերպելու նպատակով երկու կազմակերպությունների միասնական ջանքեր:

3. Նայ-բուլղարական հայրուկային խառը խմբերի գործունեություն Օսմանյան կայսրության եվրոպական տարածքում:

4. Մերոս համագործակցություն՝ ազատամարտի ռազմաֆինանսական բազայի հետ կապված խնդիրները լուծելու նպատակով:

5. Բուլղար-մակեդոնական կազմակերպության աջակցության շնորհիվ հայ ազատագրական ուժերի համար Բուլղարիայում գործունեության անհամեմատ ազատ պայմանների ստեղծում: Դա դրսևորվում էր հայերին զինավարժությանը զբաղվելու հնարավորություն տալու, հայ հեղափոխականների համար ռումբերի ու պայթուցիկների փորձարկումների համար բարենպաստ պայմաններ ապահովելու, բուլղարական զինվորական հաստատություններում նրանց սովորելու հնարավորություն տալու մեջ:

Բերենք մի քանի օրինակներ այդ համագործակցության առավել նշանակալից էջերից:

Բուլղար-մակեդոնական շարժման հետ ՆՅԴ քաղաքական շփումներն սկսվել էին Եվրոպայում՝ «Դրոշակ»-ի խմբագրության միջոցով: 1895 թ. կեսերին նման շփումներ եղան նաև Կ.Պոլսում: Դրանք մի քանի ամսվա բանակցությունների արդյունքում վերածվում են դաշինքի: Այն ՆՅԴ-ին հնարավորություն էր տալիս սուլթանական բռնապետության դեմ պայքարում առաջին անգամ օգտագործել նոր ու ազդեցիկ այնպիսի զինամիջոցներ, ինչպիսիք էին դինամիտը, ուժանակն ու ռումբերը:

Դեռևս 1895 թ. հունիսի 8-ին ՆՅԴ Կ.Պոլսի կազմակերպության ղեկավար Ն. Յուսուֆյանը (Մելիք) «Դրոշակ»-ի խմբագրությանն ուղղված նամակում հայտնում է բուլղար-մակեդոնական կազմակերպության ներկայացուցչի հետ ունեցած հանդիպման մասին: «Բուլղարներու ներկայացուցիչը երկու օր է հոս եկած է յարկապես մեզ հետ բանակցելու համար, գրում է Յուսուֆյանը,- Անոնք կուզեն գործել դինամիտով և մեր գործակցութիւնը կուզեն: Մենք տակաւին... վերջնական համաձայնութիւն չտուինք: Եթե համաձայնինք, պէտք է միաժամանակ գործենք Պոլիս և Մակեդոնիա: Կարծես թե այդի համաձայնինք...»<sup>1</sup> Նույն տարվա հուլիսի 25-ին գրված նամակում՝ հայտնելով հիշյալ կազմակերպության հետ պաշտոնական բանակցություններն ավարտելու մասին, Ն. Յուսուֆյանը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի բովանդակությունը, մասնավորապես նշելով, թե. «Նոս կուզեն մեզի ձգել, իրենք կը խոստանան ինչքան պէտք է մեզի հայթայթել (խոսքը դինամիտի մասին է - Ն.Գ.) և կը փափաքին, որ շուտով սկսինք... Նոս ինչ-որ ընենք այդ ուղղութեամբ, երկուքիս անունով պիտի ըլլայ, իսկ իրենցը՝ իրենց անունով, բայց արդեօք մի այսպիսի միացնալ գործունեութիւն մը մեր դատին արդի պայմաններու մեջ օգ-

տակա՞ր թէ վնասակար կրնայ ըլլալ: Մենք սկզբունքով համաձայնած ենք, բայց միայն կը վախճանք թէ վնասենք, փոխանակ օգնելու...»<sup>2</sup> Բայց, հետագա շարքերի ընթացքում համագործակցության նպատակահարմարության վերաբերյալ կասկածները փարատվում են: Ստացվում է նաև ՆՅԴ ղեկավար մարմինների համաձայնությունը: Մեպտեմբերի 9-ին Ն. Յուսուֆյանն արդեն հայտնում է դինամիտի առաջին խմբաքանակի ստացման և պայմանագրի շուրջ վերջնական համաձայնության գալու մասին:<sup>3</sup> Մեպտեմբերի 21-ի նամակում, որը գրվել է Բար Ալիի ցույցից հետո՝ Կ.Պոլսում ստեղծված ժանր իրադրության պայմաններում, Յուսուֆյանը հայտնում է. «Վճռած ենք մակեդոնացիներու հետ ռումբ տրինամիտի դիմել...»<sup>4</sup> Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 26-ին նա ոչ միայն հայտնում է մեծ քանակությամբ ուժանակ և ռումբեր ստանալու մասին, այլև, ըստ էության, առաջին անգամ առաջ քաշում Կ.Պոլսում ռումբային կոիվներ սկսելու գաղափարը՝ դա համարելով օրհասական վիճակում գտնվող հայության փրկության ելքը: Ի դեպ, այդ գաղափարն է, որ հետագայում ընկավ Օսմանյան դրամատրան գրավման ծրագրի հիմքում: Թեև 1896 թ. գարնանը Կ.Պոլսի ՆՅԴ կառույցը կարողանում է սեփական ուժերով լուծել ռումբեր պատրաստելու խնդիրը, այնուհանդերձ, բուլղարացի հեղափոխականների օգնությամբ զինամթերք ու պայթուցիկներ ձեռք բերելու և Կ.Պոլիս փոխադրելու գործընթացը շարունակվում է նաև հետագա տարիներին՝ հարկապես մեծ չափեր ընդունելով 1904-1905 թթ.՝ սուլթան Աբդուլ Նամիդի նկատմամբ 1905 թ. հուլիսին կազմակերպված անհաջող մահափորձին նախորդած շրջանում:

Բուլղար հեղափոխականների հետ ՆՅԴ համագործակցությունն առավել սերտանում է 1898 թ. սկսած, երբ Ֆիլիպպոպոլիս (Պոլովդիվ) քաղաքում հաստատվում և այնտեղ մասնավոր վարժարան է հիմնադրում ՆՅԴ ղեկավար գործիչներից Ռոստոմը (Մր. Զորյան): Իր ձեռքը վերցնելով ՆՅԴ Բալկանյան կառույցի ղեկավարությունը, նա կարճ ժամանակամիջոցում սերտ կապեր է հաստատում բուլղար-մակեդոնական կազմակերպության մի շարք ղեկավար գործիչների հետ, որոնց թվում էին Բ. Սարաֆովը, Լյապովը, Մինկովը, Թյուֆեկչիևը, հայրնի հրապարակախոս Ս. Ռադելը և ուրիշներ: Վերջիններիս անմիջական աջակցությամբ հաջողվում է կապեր հաստատել նաև Բուլղարիայի պետական բարձրաստիճան գործիչների, այդ թվում՝ վարչապետ Պետկովի, գեներալ Մավովի, Ն. Գեևադիևի և այլոց հետ:<sup>5</sup> Շնորհիվ դրա, ոչ միայն նպաստավոր պայմաններ են ստեղծվում Բուլղարիայի հայ համայնքի բնականոն կյանքի և Բուլղարիայում հայ հեղափոխականների գրեթե ազատ գործունեության համար,

այլն առավել սերտանում են ՆՅԴ-ի և մակեդոնական կազմակերպության կապերը, ի հայտ գալիս համագործակցության նոր ձևեր:

Բուն Բուլղարիայում այդ համագործակցության շահավետ կողմերից մեկը մարմնամարզական և զինավարժական խմբերի ստեղծումն էր: Մինչ այդ հայերը Բուլղարիայում զինավարժությամբ զբաղվում էին գաղտնի: Ռոստոմի ջանքերով նախ Ֆիլիպոպոլիսում, ապա Բուլղարիայի մյուս քաղաքներում մարմնամարզական ընկերություններին կից ստեղծվում են զինավարժական կամ նշանառության խմբեր: Դրանցում մակեդոնական կազմակերպության անդամ բուլղարացի սպաների ղեկավարությամբ հայերն ազատ զբաղվում էին զինավարժությամբ՝ քանի դեռ կառավարությունը չէր արգելում:<sup>6</sup> Այդ խմբերը հնարավորություն էին տալիս կռվող ուժեր պարբերաբար՝ հեղափոխություն, հարկ եղած պահին, դրանք երկիր ուղարկելու համար:

ՆՅԴ Արևմտյան բյուրոյին ուղղված Ռոստոմի նամակները վկայում են, որ 1899-1900թթ. ՆՅԴ-ն և բուլղար-մակեդոնական կազմակերպությունը համագործակցել են Կ.Պոլսում համարել ձեռնարկ իրականացնելու համար: Այդ ձեռնարկը, որի մանրամասներն այսօր էլ անորոշ են, ըստ երևույթին անկարար է մնացել միջոցների պակասի և ՆՅԴ Կ.Պոլսի պարասխանարքու մարմնի անդամ Գարեգին Խաժակի ու բուլղարացի հեղափոխականների ձեռքբերվածության պատճառով:<sup>7</sup>

Այդուհանդերձ, հայ-բուլղարական զինակցությունը թրծվեց նաև ռազմի դաշտում՝ ի դեմս Ադրիանապոլսի մոտ թուրքական զորքերի դեմ հայ-մակեդոնական հայդուկային խմբի մղած ճակատամարտի: Դա տեղի ունեցավ հեղափոխական հանգամանքներում: Նախորդ դարակազմին ՆՅԴ-ն և բուլղար-մակեդոնական կազմակերպությունը զգում էին դրամական միջոցների սուր կարիք, ինչը նրանց թույլ չէր տալիս կյանքի կոչել նախապես ծրագրված մարտավարական կարևոր խնդիրները: Նման պայմաններում ազատամարտի համար անհրաժեշտ միջոցների ձեռք բերման «կես խաղաղ» միջոցներից մեկը դառնում է Թուրքիայի եվրոպական փարածքներում իրականացվող բռնի հանգանակությունը: Բուլղար-մակեդոնական կազմակերպությունն այդ հարցում արդեն փորձ ուներ և Ռոստոմի միջոցով ՆՅԴ-ին առաջարկում է համագործակցել: Առաջարկությունն ընդունվում է: 1900 թ. հունիս-հուլիսին հայ-բուլղարական վեց հոգանոց հայդուկային խումբը (3 հայ, 3 բուլղար-մակեդոնացի) հաջողությամբ կատարում է առաջադրանքը: Խմբի ձեռք բերած շուրջ 13000 ֆրանկը (10.650 բուլղարական լև) չի բաժանվում և մնում է երկու կազմակերպությունների փրամադրության փակ՝ Կ.Պոլսում նրանց ընդհանուր կարիքների համար:<sup>8</sup>

Ցավոք, մեկ փարի անց կազմակերպված նույնանման արշավանքը հաջողություն չի ունենում: 1901թ. հուլիսին հայ և բուլղար-մակեդոնացի 10 հայդուկներից կազմված խմբի փորձը՝ մտրակա ազարակներից մեկից առևանգելու Ադրիանապոլսի վային, ձախողվում է: Վերջինս ընդամենը կես ժամ առաջ հեռացել էր ազարակից: Ձեռնարկը վերածվում է շուրջ 1500 զինվորների և երկու թնդանոթների դեմ հայդուկային փոքրիկ խմբի մղած չորս ժամյա անհավասար, բայց դյուցազնական մարտի: Պայքարելով մինչև վերջին փամփուշտը՝ հայդուկներից վեցը (երեքական հայ և բուլղար-մակեդոնացի) նահապարկվում են, մնացած չորսը (երկու հայ, երկու բուլղար-մակեդոնացի)՝ գերվում: Թշնամու կորուստները հաշվվում էին փասկյակներով: Ահաբեկված իշխանությունները շփարկում են կասեցնել հայ-մակեդոնական զինակցության հեղափոխ խորացումը: 1901թ. դեկտեմբերի 9-ին գերված չորս հայդուկները՝ Պետրոս Սերենճյանը (Բուլղարացի Պետր), Օննիկ Թորոսյանը, Սվետոսլավ Մերջանովը և Խրիստո Նաջի Իլինը, Ադրիանապոլսի չորս հրապարակներում կախաղան են բարձրացվում:<sup>9</sup> Բայց Ադրիանապոլսի կախաղանները, որոնք մեծ հուզում առաջ բերեցին հայկական ու բուլղարական շրջաններում և ունեցան միջազգային արձագանքներ, ավելի ընդգծեցին երկու ժողովուրդների դաշինքի ամրությունը և նրանց դարձրին ընդհանրությունը:

Որոշ պարզաբանումներ փանք նաև հայոց ազատամարտի նկատմամբ բուլղարական իշխանությունների վերաբերմունքի մասին: Մակեդոնական կազմակերպության հետ ունեցած իր ոչ դյուրին հարաբերությունների և թուրքական իշխանությունների անդադար բողոքների պատճառով Բուլղարիայի իշխանությունները երբեմն-երբեմն խստություններ էին գործադրում նաև հայ հեղափոխականների նկատմամբ, բայց վերջիններիս հանդեպ վերաբերմունքն ընդհանուր առմամբ բարյացակամ էր: Դա պարզորոշ դրսևորվում է Աբդուլ Նամիդի մահափորձին նախորդած ամիսներին: Մուլթանի համար նախապեսվող ձեռնառումների փորձարկումները կատարվում էին Բուլղարիայում: Երբ 1904թ. աշնանը այդ փորձարկումները կատարող չորս հայ հեղափոխականներ (Մարգիս Բարսեղյան, Նամբարձում Աղաջանյան և ուրիշներ) Վառնայում ռումբերը ձեռքներին ձեռքակալվում են, բուլղարական իշխանությունները, հաշվի առնելով առաջացած աղմուկը, բավարարվում են նրանց ձևականորեն արտաքսելով Սերբիա՝ միաժամանակ հնարավորություն փայլով այլ անուններով եր վերադառնալ և շարունակել աշխատանքները: Նույն վերաբերմունքը դրսևորվում է նաև 1905թ. մարտին, երբ ձեռնառումի փորձարկման պահին զոհվում են Քրիստոփոր Միքայելյանը և Վոսմաչյանի Քենդիրյանը: Այդ առիթով ոչ միայն

դար չի բացվում, այլևս ուսրիկանությունը Ք. Միքայելյանի հյուրանոցային համարը խուզարկում է միայն այն բանից հետո, երբ վաղօրոք այնպեղից փարվել էին բոլոր փաստաթղթերը և կարևորություն ներկայացնող իրերը:<sup>10</sup> Ավելին, իշխանությունների լուս համաձայնության պայմաններում նահապակված գործիչների հուղարկավորությունը վերածվում է երկու ժողովուրդների բարեկամության աննախադեպ ցույցի:

Բուլղարական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի դրսևորումներից մեկն էլ աջակցությունն էր հայ զինվորական կադրերի պարտաստման գործին: Մակեդոնացի հեղափոխականների աջակցությամբ, որպես առաջին քայլ, Բուլղարիայի բարձրագույն զինվորական վարժարանում կրթություն են ստանում մի քանի հայ երիտասարդներ, որոնց վիճակված էր կարևոր դեր խաղալ ազապագրական պայքարում (Գարեգին Նժդեհ, Թուրցիկ Գևորգ և ուրիշներ): 1906թ. Բորիս Սարաֆովի աջակցությամբ Դուբնիցայի շրջանում՝ բուլղարա-թուրքական սահմանի մոտ, հիմնվում է ՅՅԴ գաղտնի զինվորական դպրոցը: Բուլղարական բանակի հարյուրապետ Պողոս Պողոսյանի գլխավորությամբ շուրջ 80 հայ երիտասարդներ ստանում են զինվորական զիտելիքներ՝ նախապես պարտավորվելով հեղազայում գործել Երկրում: Թուրքական իշխանությունների բողոքների պատճառով 1907թ. դպրոցը փակվեց, բայց այն կարևոր դեր խաղաց ազապագրական պայքարի համար զինվորական կադրեր պարտաստելու գործում:

Որպես ամփոփում, նշենք, որ բուլղարական մակեդոնական հեղափոխական կազմակերպության հետ հայ հեղափոխականների սերտ դաշինքը, Բուլղարիայում բնակություն հաստատած հայերի և հայ ազապագրական պայքարի նկատմամբ բուլղարական իշխանությունների համակրական վերաբերմունքը այն վճռորոշ հանգամանքներն էին, որոնք ապահովեցին հայ-բուլղարական զինական համագործակցության առավել բարձր մակարդակը Բալկանյան պարտերազմների փարիներին՝ ի դեմս բուլղարական բանակի կազմում Նժդեհի և Անդրանիկի գլխավորությամբ գործող հայ կամավորների վաշտի:

Իսկ ավելի քան մեկդարյա իրադարձություններից մեզ մնացած գլխավոր դասն այն է, որ մրավորական հայդուկներ Բուլղարացի Պետրոյի, Սվետոսլավ Մերջանովի և նրանց ընկերների նախապակությամբ սրբագործված հայ-բուլղարական բարեկամությունը երկու ժողովուրդների ազգային-քաղաքական և պետական գործիչներին պարտադրում է իրենց ժողովուրդներին դեպի ապագա առաջնորդելիս երբևիցե չանտեսել պատմական անցյալի իրողությունները:

1. Դիան Ն. Յ. Դաշնակցության, յավելված «Նայրենիք» ամսագրի, խմբ. Միմն Վրացեանի, Պոսթըն, 1934, հ. 1, էջ 238:
2. Դիան Ն. Յ. Դաշնակցության, հ. 1, էջ 240:
3. Տեն նույն փեղում, էջ 242:
4. Նույն փեղում, էջ 246:
5. Տեն Վարանդեան Մ., Ն. Յ. Դաշնակցության պարմութին, Երևան, 1992, էջ 216-217:
6. Տեն Նիթեր Ն.Յ. Դաշնակցության պարմութեան համար (Այսուհետև՝ Նիթեր...), խմբ. Նրաչ Տասնապետեանի, Բ. հապոր, Բ. փապարտութին, Պէյրութ, 1985, էջ 154:
7. Մանրամասն փեն Ռոսպում, Նամականի, մահուան ութսունամեակին առթիւ, խմբ. Նրաչ Տասնապետեանի, Պէյրութ, 1999, էջ 151, 165-166, 221-223, 232-233:
8. Մանրամասն փեն նույն փեղում, էջ 208, 216, 218, 220, 231, 271:
9. Մանրամասն փեն Ռոսպում, Նամականի, մահուան ութսունամեակին առթիւ, էջ 253, 256-258, 261-263, 270-271:
10. Տեն նույն փեղում, էջ 391: Նույնը՝ Նիթեր..., Բ. հապոր, էջ 335:

**ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ**

**ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՆԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՎԱԿՅՐԵՐԸ  
(ՄԿՁԲՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԻՑ  
ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ ՄԿԻՁԲԸ)**

Նայ-բուլղարական առնչություններն ունեն դարերի պարմություն: Դրանց մասին վկայությունները սկսվում են արդեն V դարից: Ընդ որում, հենց այս ժամանակից էլ՝ մասնավորապես V դարի կեսերից, Բուլղարիայի փարածքում, որ այն ժամանակ դեռ հայրենի էր Թրակիա անունով, հանդես են գալիս առաջին հայկական համայնքները: Սկզբնապես դրանց բնակիչներն այն հայ զինվորականներն էին, որոնք այսփեղ էին փեղափոխվել բյուզանդական կայսրերի հրամանով: Նայերի արտաբնակեցումը Բալկաններ կայսրությունը կազմակերպում էր որոշակի հեռահար նապարակներով: Նախ և առաջ դրանով բյուզանդացիները փորձում էին թուլացնել Նյասափանի դիմադրողականությունը, և ապա՝ իրենց մարտունակությամբ հռչակված հայկական զորամասերը պարտավոր էին ամրապնդել փեղության Դանուբով անցնող հյուսիս-արևմտյան սահմանները: Այս քաղաքականությունը հարկապես մեծ ծավալներ ընդունեց VI դարի վերջերին: Նայրենի է, որ Մավրիկիոս (Մորիկ) կայսրը ոչ միայն կարող ավե-

լացրեց ժամանակակից Բուլղարիայի փարածք ուղարկվող հայկական զորամասերի քանակը, այլև հետամուտ էր «խուրոք և անհնազանդ» հայերին զանգվածաբար Թրակիա գաղթեցնելու խիստ վրանգավոր ծրագրի իրականացմանը, որն իբր մշտական և կայուն խաղաղություն կհաստատեր Բյուզանդիայի և նրա ավանդական հակառակորդ Պարսկաստանի միջև: Մորիկի քաղաքականությունը շարունակվեց նաև հաջորդ փասնամյակներին: Ցայտուն օրինակ կարող է դիտվել նրա հաջորդ Փոկասի հրամանը, որի մասին վկայում է Մերետուր. «Նայոց աշխարհի համար... 30.000 հեծյալ եմ կորցրել: Արդ՝ այնպեղից ինձ համար պետք է 30.000 ծուխ հավաքվի և վերաբնակեցվի Թրակացիների աշխարհում»: Կայսրության այս քայլերը, անշուշտ, ծանր հետևանքներ էին ունենում Նայաստանի համար, միաժամանակ՝ սրվարացնում էին Բուլղարիայի փարածքի հին գաղթավայրերը: VII դարի վերջից սկսվում են արդեն հայբուլղարական անմիջական առնչությունները: Դրանում վճռական դեր խաղաց 681թ. Բավկաններում Առաջին Բուլղարական թագավորության, որպես նոր աշխարհա-քաղաքական իրողության, հանդես գալը: Ընդ որում, այդ փոխհարաբերությունների ակտիվ, պարբերական բնույթի մասին է խոսում բուլղարական պետության հիմնադիր խան Ասպարուխի (Իսպիրուխ) հիշատակումը հայոց «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում: Բուլղարիայի փարածք հայերի ներթափանցումը հատկապես զանգվածային բնույթ ստացավ VIII-IXդդ.: Ընդ որում, վերոնշյալ ավանդական քաղաքականության իրականացմանը զուգահեռ բյուզանդացիները փորձում էին նաև արմատախիլ անել կայսրությանը IXդ. մեծապես սպառնացող պավլիկյան աղանդավորական շարժումը: 872թ., գրավելով պավլիկյանների գլխավոր կենտրոնը՝ Տեփրիկեն (Տեփրիկ), Վասիլ (Բարսեղ) I կայսրը հազարավոր մարդկանց վերաբնակեցրեց Բուլղարիայում: Ինչպես ցույց են տալիս պահպանված տեղանունները, պավլիկյանների բնակավայրերը հիմնականում սփռված էին Նյուսիսային Բուլղարիայում, ուր առ այսօր պահպանվել են Պավլիկենի (Յանտրա գետի Ռոսիցա վրակի հյուսիսային կողմում), Գոռնո- և Դոլնո-Պավլիկենի (Լովչե քաղաքի շրջանում), Կալենիկ (Վիտ գետի հովտում) և այլ տեղանունները: Նայկական հոծ համայնքների առկայության մասին են խոսում նաև մինչև XIX դարը պահպանված Էրմենսկո, Արմենոխոր, Տորոս (Թորոս), Էրմենովո, Արմյանկովցի, Արմենիցա, Էրմենլի, Արմենքյո խիստ բնորոշ անունները կրող բնակավայրերը: X-XIդդ. Բուլղարիայի փարածքում հաստատված հայ բնակչությունը կրոնա-դավանական առումով բաժանված էր 3 հարվածի: Բացի պավլիկյան աղանդավորներից, որոնց ուսմունքը, ինչպես հայտնի

է, գաղափարական խթան հանդիսացավ բողոքական հզոր շարժման առաջացման համար, մեծ թիվ էին կազմում առաքելադավան և քաղկեդոնիկ կամ «իբեր» (իմա՝ վրացի) երջորջվող հայերը: Բուլղարիայի առաքելական հայերի հոգևոր կենտրոնը հնագույն Ֆիլիպոպոլիս (Ֆիլիպե, այժմ՝ Պլովդիվ), քաղաքի առաջնորդությունն էր, որին էին ենթարկվում Նիկոպոլի (Նիկիա), Մզլենի, Դևոլի, Սրեդեցի (այժմ՝ Մոֆիա), Մեծ կամ Վելկո Տըռնովոյի, Սպրումիցայի, և այլ քաղաքների հայ համայնքները: XII դարում Ֆիլիպոպոլսում եղել է հայկական վանք՝ Նովհաննես Ութմանի վանահայրությամբ: Տեղի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը Գրիգոր IV Տղա կաթողիկոսի (1173-1193) կողմից նշանակվել է հայոց եկեղեցու պաշտոնական բանագնաց: Բյուզանդական կայսրերը մեծ թվով հայերի են տեղափոխել նաև Բուլղարիային լեզվա-մշակութային առումով ազգակից Մակեդոնիայի փարածք: Ինչպես վկայում է Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ), Վասիլ (Բարսեղ) II-ը X դարի վերջին «մտածեց իր թագավորության մեջ ապրող հայերին անցկացնել Մակեդոնիա՝ Բուլղարիայի դիմաց, որպեսզի շենացնեն այդ երկիրը. ուստի և շարերին տեղահանեց և փարավ այնպեղ»: Նշված ժամանակահատվածում աշխույժ հայկական համայնքներ էին ձևավորվել Օխրիդում, Բիտոլում, Սկոպլիեում (օսմանյան փրիապետության շրջանում՝ Ուսկյուպ), Վելեսում (Քյոմփուրուկ կամ Քյոլիուրու) և այլուր: Նայ քաղկեդոնիկները հանդիպում էին ավելի փոքր խմբերով: Նրանց առավել նշանավոր ներկայացուցիչն է Մամուել Կոմսաձազը (Մամուլի, ըստ Ասողիկի՝ «մեր հայոց ազգից»), որն՝ ապստամբելով բյուզանդացիների դեմ, 997թ. դարձավ Արևմտաբուլղարական թագավորության արքա: Առանձնացնել է պետք նաև իշխան Գրիգոր Բակուրյանին, որն իր եղբայր Աբասի աջակցությամբ 1083թ. Բազկովո գյուղում (Պլովդիվից մոտ 30 կմ հարավ) կառուցեց Պեպրիծոնի (Բազկովոյի) հոջակավոր վանքը՝ իր մեծությամբ և նշանակությամբ երկրորդը Ռիլեից հետո: Իր իսկ կողմից ստեղծված միաբանության կանոնադրությունը («Սահմանք», մեզ է հասել նաև հայերեն խմբագրությամբ) իշխանը ստորագրել է «հայերեն գրերով»: Նա իրեն կոչում է հայկական «տանուրեր» և «գորավար» փրիգոններով՝ նշելով, որ սերում է հայոց նշանավոր տոհմից: Քննարկվող ժամանակաշրջանում Բուլղարիայի հայերի թիվը կազմում էր ավելի քան 50.000 մարդ: Ներագա փասնամյակներին, սակայն, այն նկատելիորեն նվազեց՝ կապված հայ քաղկեդոնիկ և պավլիկյան համայնքների ամբողջական ձուլման հետ: Այնուամենայնիվ, XIV դարից սկսած նկատվում է բուլղարահայերի թվի զգալի աճ՝ որպես արդյունք վերակազմված նոր գաղթականական ալիքի: Ծիշտ է, XIVդ. վերջին Բուլղա-

րիան ինքն էր նվաճվել Օսմանյան կայսրության կողմից, սակայն Հայաստանում փրորող դժնդակ իրավիճակը, մանավանդ՝ Կիլիկյան պետության կործանումը, ապա՝ XVI դարի սկզբից մոլեզնող, թուրք-պարսկական պայքերազմները, այնպիսի դժոխային իրավիճակ էին ստեղծել հայ ժողովրդի համար, որ հազարավոր մեր հայրենակիցներ հարկադրված էին զանգվածաբար հեռանալ հայրենիքից՝ փրկություն փնտրելով օտար ափերին: Բուլղարիա հասած հայերի համար այս երկիրը դարձավ երկրորդ հայրենիք՝ շնորհիվ բուլղար ժողովրդի ջերմ ընդունելության: Հայերի ներթափանցումը Բուլղարիայի փարածք փեղի է ունեցել երկու հիմնական ուղղություններով: Առաջինը՝ հարավայինը, սկսվել է XV դարի I փասնամյակներին, երբ Կիլիկիայից հազարավոր հայերի գաղթականական խմբեր Կ.Պոլսի վրայով անցել են Բուլղարիա՝ փարածվելով նաև Բալկանյան այլ երկրներում: Թուրք-պարսկական պայքերազմների հետևանքով XVI-XVII դ.դ. հայերի էլ ավելի սրվար զանգվածներ հայտնվեցին Բուլղարիայում: Դրանց մեջ մեծ թիվ էին կազմում Արարապոյան երկրի, մասնավորապես Կարբի գյուղաքաղաքի բնակիչները (ի դեպ՝ 1720-ական թվականներին դարձյալ Կարբիից Բուլղարիա է հասել հայերի նոր ալիք, հենց այդպիսի մի ընտանիքում էլ 1769թ. Ռուսչուկ, այժմյան Ռուսե քաղաքում է ծնվել նշանավոր դիվանագետ Մանուկ բեյ Միրզայանը): Տեղափոխված հայերի մեջ զգալի էր նաև նախնիքանցիների, դափանցիների, շոռթթիների, մալաթիացիների, դիարբեքիցիների փոսակարար կշիռը: Հայկական համայնքները նկարելիորեն սրվարացան նաև XVII դարի սկզբին ջալալիների վայրագություններից խույս փված հայերի հաշվին, որոնք, Գրիգոր Դարանաղցու խոսքերով, «յԼստամայօլ եկին և ումանք ի Թրակիա, որ Ուռումել ասի (իմա՝ Բուլղարիա), ի Վառնայո անցանելով ի Պելլոդար (Բելգրադ), մինչև ի Պուդուանայ աշխարին (Մոլդովա) և ի Լեհացն»: Խիստ կարևոր էր նաև գաղթականության հյուսիսային ուղղությունը: XVդ. կեսերին սուլթան Բայազիդ II-ը մեծաթիվ հայերի է փեղափոխել Բուլղարիա և Կ.Պոլսի սևծովյան նշանավոր Աղբերման քաղաքից (ռումիներեն՝ Չիփարեա Ալբա, այժմ՝ Բելգորդ-Դեստրովսկի, Ուկրաինա): 1475թ. Ղրիմի օսմանյան նվաճումը հայ գաղթականների մի նոր ալիքի սկիզբը հանդիսացավ, որը շարունակվեց նաև XVII դարի I փասնամյակներին, երբ Կաֆայից (Թեոդոսիա) հազարավոր հայեր, խույս փախելով սովի անողոր ճիրաններից, հանգրվանեցին բալկանյան այս երկրում: Վերջապես Բուլղարիա հայ բնակչության մի նոր ալիք հասավ 1673թ.՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքից: Սուլթան Մուհամմեդ IV-ի հրամանով Կ.Պոլսի վերջինիս հայ բնակիչներին փեղափոխող առաջաստանա-

վերը, հանդիպելով փոթորիկի, ափ նետվեցին Վառնայի և Սոգուպոլի շրջաններում: Աղբերից փրկված մեր հայրենակիցները հենց այսօր էլ էլ հիմնեցին իրենց նոր համայնքները: Փաստորեն, XVII դարի կեսերին էլ ավարվեց բուլղարահայ նոր գաղթավայրերի ցանցի ձևավորումը: Նշված ժամանակաշրջանում Բալկանյան թերակղզու, և, մասնավորապես, Բուլղարիայի հայ բնակչության փեղաքաշխման ու մարդաշարության վերաբերյալ խիստ բնորոշող են XVII դարի սկզբի նշանավոր ճանապարհորդ և ուղեգիր Միմենո Լեհացու հետևյալ խոսքերը. «Եւ թէ հաշուէ ի Պուդուանա մինչև Ստամայօլ, պութուն Ուռումելին (այսօր էլ՝ Օսմանյան կայսրության եվրոպական փրոյոյթները) մինչև մեծն Վանափոլի, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆոլիկ (ազարակ), որ հայ չկենայ»: Ընդ որում, բուլղարահայ գաղթավայրերի վերելքն ու բարգավաճումը, առանձին ընդհարումներով, շարունակվեցին շուրջ մեկ դար՝ մինչև XVIII դարի II կեսը: Մասնավորապես դա են ցույց տալիս XVIII դարի հայկական սկզբնաղբյուրների փյվյալները, որոնց մեջ առանձնանում են Միմենո Երևանցի կաթողիկոսի նշանավոր «Ջամբոր», ինչպես նաև նրա արենադպիր և զավագանակիր արքեպիսկոպոս Երեմիա Օշականցու Ս. Էջմիածնի նվիրակական թեմերի ամփոփիչ փեղեկագիրը: Դրանց քննությունը պարզորոշ ցույց է տալիս, որ ընդհուպ մինչև 1760-ական թ.թ. կեսերը հայկական մեծ ու փոքր համայնքներ էին հանդիպում Բուլղարիայի գրեթե ողջ փարածքով մեկ՝ Սև ծովի ափերից մինչև ժամանակակից բուլղարա-սերբական սահմանագլուխը: Հայաբնակ բնակավայրերի թիվն անցնում էր 2 փասնյակից: Իրենց բազմամարդությամբ առանձնանում էին մայրաքաղաք Սոֆիան, Պլովդիվը (հայկական աղբյուրներում՝ Ֆիլիպե կամ Հուլուպա), Տրոնովոն (Թոնովա), Վիդինը, Բուրգասը, Վառնան, Ռուսեն (Ռուսշուկ, Ուրուշուղ), Ռազգրադը (Ռազգար, Նեգարդար), Շումենը (Շումա), Պրովադիան (Փրավարի), Ստարա-Ջագորան (Էսքի-Ջաղարա) և այլն: Նշանակալից համայնքներ են եղել նաև Սիլիստրա (Սիլիստե), Նովա-Ջագորա (Ենի-Ջաղարա, թրք.՝ Ենգիշեհիր), Այիդուս (Այդուս), Կազանլիկ, Դոբրիչ (Հաջի-օլի Պազարջիդ), Պազարջիկ (Թաթար-Բազարի), Ախելոյ (Այլոյի), Սիլվեն (Սիլմենե, Իսլիմեա), Խասկովո (Խասգեղ) և շար ուրիշ այլ գյուղաքաղաքներում ու ավաններում: Հայերը, որպես կանոն, ապրել են առանձին թաղամասերում, որոնք հիմնականում կոչվել են «Հայկական»: Այդպիսիք հիշարակվում են Սոֆիայում, ուր XVII դ. կեսին հայ բնակչության թիվն ավելի քան 1600 մարդ էր, Վառնայում, Տրոնովոյում, Շումենում, Ռազգրադում, Ռուսետում և այլ քաղաքներում: Բոլոր համայնքներում, գրեթե անխորհր, գործել են հայկական եկեղեցիներ: Այս-



պես, Սոֆիայի եկեղեցին կառուցվել է 1673թ.՝ իզմիրցի մեծահարուստ Ապրո Չելեբիի միջոցներով: 1675 թվականին է հիմնվել Ֆիլիպեի (Պյովդիվ) Ս. Գևորգ (կոչվել է նաև Ս.Ստեփանոս) եկեղեցին, որը գործում է առ այսօր: Եկեղեցիներ են ունեցել նաև Ռուսեն (Ս. Ասրվածածին), Բուրգասը (Ս. Ասրվածածին), Վառնան (Ս. Սարգիս), Տրևոլուն (1808թ. քաղաք այցելած միսիթարյան միաբան Մինաս Բժշկյանցը, առանց անունը նշելու, փեղի եկեղեցին կոչում է «գեղեցկաշեն»), Պազարջիկը (Ս. Ստեփանոս), Գյումուլջինան (Գյումուրջին, այժմ՝ Նունասարանի կազմում, վերանվանվել է Կոմոսինի) և այլն: Արևելյան Թրակիայի Դիմեթոկա (այժմ՝ Դիդիմոփիխոն, Նունասարան) գյուղաքաղաքի հայ համայնքը նշանավոր էր իր Ս. Գևորգ Զորավարի վանքով, որը Ղուկաս Ինճիճյանը համարում է «հռչակաւոր յայն կողմանս՝ սակս հրաշագործ պարկերի սրբոյն, և է ընդ իշխանութեամբ առաջնորդին Էրդենեու (իմա՝ Ադրիանուպոլիս, բուլղարերեն՝ Օդրին), ուր նստի փոխանորդ նորին»:

Բուլղարիայի հայկական եկեղեցիներից շարերը միաժամանակ և՛ կրթության, և՛ հայ գրչության հայտնի կենտրոններ էին: Մեզ են հասել Պյովդիվի, Սոֆիայի, Շումենի, Սիլվենի, Պրովադիայի, Ստրա-Ջագոբայի, Վառնայի հոգևոր կենտրոններում ընդօրինակված բազմաթիվ ձեռագիր մատյաններ, որոնցից երկու փասնյակը պահվում են Մաշտոցյան Մատենադարանում:

XVII-XVIII դ.դ. բուլղարահայերն ազդեցիկ դեր են ունեցել երկրի արհեստագործության և առևտրի զարգացման գործում: Որպես հնուփ վարպետներ հռչակված էին Սոֆիայի հայ դարբինները, որոնք միավորված էին առանձին համքարության («եղբայրություն», թրք.՝ էսնաֆ) մեջ: Շումենի (Շումլա) հայ պղնձագործները ևս կազմում էին առանձին էսնաֆ, որը ոչ միայն կարգավորում և վերահսկում էր ձույլ պղնձի ներմուծումը Տրապիզոն-Վառնա ծովային ուղիով, այլև արտադրանքի արտաձույնը Կ. Պոլիս: Նոչակված էին նաև հայ ոսկերիչները, զինագործները, ժամագործները, թիթեղագործները և այլք: Միջնադարյան Բուլղարիայի առևտրի զարգացման գործում բուլղարահայերն իրենց ուրույն փեղն ունեն: Բացի մանր արհեստավոր-վաճառականներից, եղել են նաև խոշոր առևտրականներ, որոնք մասնակցել են Բալկաններով ընթացող փարանցիկ միջազգային առևտրին: Բուլղարական քաղաքների փոստային զարգացման գործում անուրանալի է մեր կողմից արդեն հիշարակված Մանուկ բեյի դերը: Ռումինացի ուսումնասիրող Գեորգե Բեզվիկոնին նրան համարում է «բուլղարական քաղաքների կազմակերպիչ», ի նկատի ունենալով անշուշտ այն հսկայական ավանդը, որ բերել է այս երևելի հայտը-

դին իր հայրենի Ռուսչուկ-Ռուսեում և այլ քաղաքային բնակավայրերում մանուֆակտուրաների սրեղծման, առևտրի և փոստային զարգացման ասպարեզում:

Таким образом, музыкально-хореографическая партитура, записанная по системе С. Лисициан позволяет сделать слогометрический анализ, выявляющий соотношение музыкального текста и кинетического текста отдельных частей тела, а также указать на конкретном примере возможность создания полифонической слогометрической музыкально-хореографической партитуры.<sup>7</sup>

**ПОЛНАЯ ПАРТИТУРА «ЛАЧИ»**

**Пример 9.**

Вокальная строка:

Движения рук (сгибов и разгибов локтевых суставов):


Сгибы колен:

Шаги (движения стопы):

Приведем также примеры квантитативного анализа ещё двух плясок, зафиксированных С. Лисициан:

**Пример 10.**

*Армянская пляска «Вер-Вер» (фрагмент)*





**РАСЧЕТ МУЗЫКАЛЬНО-ХОРЕОГРАФИЧЕСКИХ СТОП «ВЕР-ВЕРИ»**




**Пример 11.**

*Курдская песенпляска «Хыртан» (фрагмент)*





**РАСЧЕТ МУЗЫКАЛЬНО-ХОРЕОГРАФИЧЕСКИХ СТОП «ХЫРТАН»**  
(движения стопы ноги)



Проведенные нами первые опыты применения количественного метода анализа музыкально-хореографической партитуры естественно требуют уточнения и дальнейшей разработки этого метода. Анализ записей болгарских хоро, осуществленных Джуджевым и армянских песенплясок (парергов), осуществленных Лисициан позволяет также выявить степень генетического и типологического родства хороводных танцев болгарского и армянского народа. Сравнение синхронных записей музыкально-хореографических партитур позволит выявить закономерности сочетания музыкальных и хореографических предложений. Последнее представляет особый интерес, поскольку, как в армянских, так и в болгарских хороводах в зафиксированных образцах окончания музыкальных и хореографических предложений в большинстве случаев не совпадают.

Одним из актуальных аспектов является сравнение методов исследования народных танцев Стояном Джуджиевым и Србуи Лисициан.

#### ПРИМЕЧАНИЯ.

1. Сведения о научной биографии Стояна Джуджева содержатся в "Музыкальной энциклопедии", т. II, М., 1974. См. также "Музыкально-энциклопедический словарь", М., 1990.
2. См. Ст. Джуджев. "Българска народна музика", т. I, с. 401-504.
3. См. там же, с. 413.
4. Следует отметить, что система Франсуа Дельсарта оказала самое непосредственное воздействие как на систему ритмопластического танца, который преподавала С. Лисициан, так и в дальнейшем, при создании системы записи движения, а так же на метод анализа движений армянских народных танцев.
5. О творческой и научной биографии С. Лисициан см. статьи Ж. Хачатрян в «Հայաստանի և Եվրոպայի հանրագիտարան», т. 4, Ереван, 1978 и "Балет. Энциклопедия", М., 1981, а также Србуи Степановна Лисициан "Библиография", сост. и автор текста Ж. Хачатрян (рукопись на арм. и русск. языках); Э. Петросян, Б. Аракелян, Предисловие к книге С. Лисициан "Армянские народные пляски"; Н. Киличян «Հայ ժողովրդաբանական պարը 20-րդ դարի սկզբից մինչև 30-ական թ.թ. (պարմանաշխարհային հեղափոխություն)», диссертация на соискание степени кандидата наук (защищена в 1998 г., рукопись), а также ряд отдельных статей Н. Лисициан, М. Лисициан, Л. Варданян, Н. Саргсян.
6. См. Србуи Лисициан. Запись движения (кинетография), М.-Л., 1940.
7. О системе записи движения С. Лисициан писали Э. Петросян, Ж. Хачатрян, Р. Захаров, Н. Киличян.
8. Помимо приведенных примеров С. Лисициан в "Кинетографии" приводит примеры музыкально-хореографических партитур фрагментов "Лекури", отдельные движения украинских народных плясок и, что очень важно, музыкально-хореографические партитуры многоэлементных движений классического танца: а) Battemants developpés (вперед, в сторону, назад, в сторону); б) Первого Port de bras; в) Шестого Port de bras; г) Отрывок сцены Марии и Гирея из III акта балета Б. Асафьева "Бахчисарайский фонтан" в постановке балетмейстера Ростислава Захарова; д) Ритмически-хореографическую партитуру выходов, построения и перестроения участников монументальной массовой сцены Финала оперы М. Глинки "Иван Султан" в Большом театре СССР.

**ՆԱՅ ՓՈԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԲՈՒՂԱՐԻԱՅՈՒՄ  
1896-1900 Թ.Թ.**

Բուլղարիան այն երկրներից մեկն էր, որոնք հանգրվան դարձան 1895-96 թվականների կոտորածներից փախուստով փրկված բազմաթիվ հայերի համար: Բուլղարական տարբեր քաղաքներում, հիմնականում Ռուսչուկում (այսպիսով՝ Ռուստ), Ֆիլիպոպոլսում և Վառնայում կուրակված ընչազուրկ և անօթևան փախստականների այդ զանգվածների համար օտարության մեջ համիդյան յաթաղանից ոչ պակաս մեծ սպառնալիք դարձան սովն ու համաճարակները: Փախստականներն սկզբնական շրջանում հարկադրված էին բաց երկնքի տակ գիշերել: Բուլղարական կառավարությունը, ի վիճակի չլինելով այլ աջակցություն ցուցաբերել, լավագույն դեպքում նրանց տրամադրում էր լքված և անմարդաբնակ դարձած հյուղակներ, բարաքներ և այլն: Ռուսչուկում և նրա շրջակայքում գտնվող փախստականներին տրամադրվեցին, օրինակ, քաղաքից 2 կմ հեռավորության վրա գտնվող մի շարք փայտե բարաքներ, որոնք նախկինում կառուցվել էին խուլերայով տառապող հիվանդներին մեկուսացնելու համար և 1890-ականների կեսերին դադարակցված էին:<sup>1</sup> Միանգամայն պարզ էր, որ առանց արտաքին աջակցության այդ փախստականներն ի վիճակի չէին լինի գոյատևել: Միակ կազմակերպությունը, որը մի քանի ամիս կարողացավ փախստականների մի մասին որոշ օգնություն ցույց տալ, Կ. Պոլսի ամերիկյան աստվածաշնչային ընկերության՝ Վառնայում գտնվող մասնաճյուղն էր, որը սակայն դեռ 1896թ. գարնանը, սպառելով իր միջոցները՝ լուծարվեց: Ահա այս ծանր ու անհուսալի իրադրությունում էր, երբ դր. Յոհաննես Լեփսիուսի կողմից ստեղծված «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերությունը, որը 1896-2000 թվականներին գործում էր նմանապես Լեփսիուսի կողմից հիմնված «Նայասարանի օգնության գերմանական միություն» կազմակերպության կառույցում որպես այդ կազմակերպության՝ Բեռլինի կոմիտեն, ստանձնեց ի թիվս բազմաթիվ այլ տարածքների, նաև Բուլղարայում հավաքված հայերին օգնության ցուցաբերման հանձնառությունը: 1896թ.-ի դեկտեմբերին ծագումով ղարաբաղցի հայ ավերարանական քահանա Աբրահամ Ամիրխանյանցը<sup>2</sup> Լեփսիուսի հանձնարարականով մեկնեց Բուլղարիա՝ այնտեղ գտնվող հայ փախստականների դրությանը ծանոթանալու և օգնության կազմակերպման համար առաջարկներ ներկայացնելու համար:<sup>3</sup>

Աննկարագրելի թշվառությունն ու զրկանքները, որոնց նա այսպես ամեն քայլափոխի հանդիպում էր, վկայում էին օգնությունն օր առաջ սկսելու անհրաժեշտությունը: «Այնպեղ միմյանց վրա լցված են բազմաթիվ փախստականներ,- գրում էր Ամիրխանյանցը՝ ամբողջացնելով Ռուսչուկ քաղաքի՝ ավելի քան 2000 փախստականների ճամբարից ստացած իր տպավորությունները,- թշվառ, ցնցոտիների մեջ, առանց անկողիների, կեղտոտ և սովահար, հյուծված, հուսահատ դեմքերով, հույսի և հեռանկարի ոչ մի նշույլ: Նրանք հարյուրներով նստած են այնտեղ, ոչինչ չեն անում, և ոչինչ չասող աչքերը սևեռում են սրա կամ նրա վրա: Նրանց տեսքը, շարժումները անկենդան և անգույն են»:<sup>4</sup>

Ռուսչուկում Ամիրխանյանցը Լեփսիուսի ընկերության կողմից տրված գումարով ճամբարականներին ցուցաբերեց առաջին օգնությունը. նրանց հարկացրեց որոշ քանակությամբ սննդամթերք,<sup>5</sup> նաև գնեց մեծաքանակ կտորեղեն, կոճակներ, ասեղներ, դերձան և այլն՝ կանանց պարվիրելով հագուստներ կարել ու բաժանել ամենակարիքավորներին: Ապա իր շրջագայությունը նա շարունակեց Վառնայում և Շումլայում, որտեղ համապատասխանաբար կային 6000 և 2000 փախստականներ: Նրանց բաժանելով որոշ քանակությամբ դրամ՝ նա մեկնեց Պրավադի, այնուհետև Բուրգաս և Ֆիլիպոպոլիս, որից հետո վերադարձավ Գերմանիա:<sup>6</sup>

Նրա տեղեկությունների հիման վրա Բեռլինի կոմիտեն վճռեց փախստականների ամենամեծ կենտրոնում՝ Վառնայում բացել նաև որբանոց, և Ա՝ Ամիրխանյանցը, ստանալով այդ իրագործելու հանձնարարականը՝ դարձյալ վերադարձավ Բուլղարիա: Նրա բացակայության ընթացքում քաղաքում գործող միակ բարեգործական կազմակերպությունը՝ արդեն հիշատակված Կ. Պոլսի ամերիկյան աստվածաշնչային ընկերության մասնաճյուղը, սպառելով իր նյութական հնարավորությունները, արդեն լուծարվել էր,<sup>7</sup> և Ամիրխանյանցը փախստականներին գտավ անհամեմատ ավելի թշվառ դրության մեջ, քան նախկինում էր. «Շուրջ բոլորը մարդիկ են սողում, նիհար, ինչպես սրվերներ,- գրում էր նա ապրիլին Վարնայից:- Նրանց մկանները անհետացել են: Նրանց դեմքը գունապ և դեղնավուն է դարձել: Նրանց հագուստը լրիվ պարտառաված է...»:<sup>8</sup>

Մայիսի 12-ին տեղի ունեցավ որբանոցի բացումը, որը գտնվում էր երկու վարձակալված տներում, և որտեղ միանգամից խնամքի տակ վերցվեցին 280 երեխաներ:<sup>9</sup> Միաժամանակ փախստականներին հեղափոխելու հնարավորություն ընձեռելու համար ձեռնարկվեցին նաև առաջին անհրաժեշտության այլ միջոցառումներ. մասնավորապես մայիսի 2-ին հիմնվեց մի հասարակական ճաշարան, որտեղ 10 պֆենիգով կարելի

էր լիարժեք սնունդ ստանալ, իսկ մեկ շաբաթ անց մի նման ճաշարան հիմնվեց նաև Շումլայում: Այդ՝ թեկուզև չնչին գներն ամենաաղքատ փախստականներին ևս մարչելի դարձնելու համար նրանց բաժանվեց դրամ, իսկ հեքո քայլեր ձեռնարկվեցին նաև նրանց ինքնուրույն վաստակի հնարավորություն տալու ուղղությամբ: Շատ փախստականներ Ա. Ա. միրխանյանցից ստացան գյուղատնտեսական գործիքներ և այգիներում աշխատելով՝ օրական վաստակում էին 2-3 ֆրանկ: Մյուսները զինվում էին այլ աշխատանքների համար անհրաժեշտ պարագաներով՝ այդ կերպ ի վիճակի դառնալով հոգալ իրենց և իրենց ընտանիքների ապրուստը: «Ես մարդկանց հարցնում եմ, թե նրանք կուզենան իր մեջքի վրա պրտելով՝ նավթ վաճառել,- գրում էր Ա. Ա. միրխանյանցն իր մայիսի 15-ի նամակում:- Դրական պատասխանի դեպքում նրանք անմիջապես նավթ են ստանում: Մեկը կոշիկի կաղապարներ պարտաստել գիտի, սակայն փայտ չունի, և ես այդ գնում եմ նրա համար: Մյուսների համար կաշի եմ գնել, և նրանք հնակարկատությամբ վաստակում են իրենց օրվա հացը: Մեկը չորացված ձուկ է տանում շուկա, մյուսը՝ բանջարեղեն, մեկ ուրիշը՝ ծխախոտ և այլն: Երբեմն միայն 10-15 մարկ է հարկավոր մի տղամարդու օրական 1-2 ֆրանկով իր ընտանիքը պահելու հնարավորություն տալու համար, երբեմն, սակայն, ըստ աշխատանքի բնույթի, 30, 40, 60 և 80 ֆրանկ: Շատերի համար կոշիկի քուրք և խոզանակներ եմ գնել, և նրանք փողոցում կոշիկ են մաքրում կարողանալով կերակրել իրենց ընտանիքներին...»:<sup>10</sup>

Իսկ ինչ վերաբերում էր համեմատաբար կրտսեր տարիքի տղաներին, ապա Ամիրխանյանցը վճռեց նրանց արհեստներ ուսուցանել՝ այդ նպատակով փախստականների շարքերից հավաքագրելով թիթեղագործության, արաղձագործության, կոշկակարության, դերձակության և գրաշարության մեջ հմուտ վարպետների: Նրանցից յուրաքանչյուրին կցվեց 10 հոգուց բաղկացած մի խումբ, որոնց ապրուստի, սննդի և հագուստի բոլոր ծախսերն ումսան ողջ ժամանակամիջոցում հատուցում էր Ամիրխանյանցը Բեռլինի կոմիտեից հատկացված միջոցներով: Իր ցանկալի լուծումը ստացավ նաև որբանոցի երեխաների և փախստականների բուժասպասարկման գործը, որը Բեռլինի կոմիտեի կողմից հանձնարարվեց գերմանաբնակ հայագի բժշկուհի օր. Մելիք-Բեգլարյանին:<sup>11</sup>

Որքան էլ նշված միջոցառումները կարևոր և մեծանշանակ էին, այնուամենայնիվ, փախստականների այդ բազմության դրության բարելավումը շարունակ հարկադրում էր նոր և ավելի արդյունավետ ուղիներ որոնել, ուստի կատարված աշխատանքներին ծանոթանալու և ապագայի ա-

նելիքները համարելով որոշարկելու նպատակով 1897 թ-ի հուլիսին մեկ շաբաթով Վառնա մեկնեց նաև Յոհ. Լեփսիուսը:<sup>12</sup>

Նրա ժամանման լուրն անմիջապես տարածվեց ողջ քաղաքում, և առաջին իսկ օրից նրան հեղհույն էր օգնություն հայցող մարդկանց մի մեծ բազմություն: Առավոտյան, երբ նա արթնանում էր, դուռը պատված էր մարդկանցով, որոնք այնտեղ հերթապահել էին նաև ամբողջ գիշեր... Եվ այնուամենայնիվ, ինչպես վկայում էր Լեփսիուսը, հարկադրաբար խնդրարկուի դերում հայտնված այդ մարդկանց մտրացիկի հոգեբանությունը շարունակում էր օտար լինել. «Շատերը ձեռքը մեկնելու պահին թեքում էին իրենց դեմքը... մեկընդմեջ մի հյուծված կերպարանք ծնկի էր իջնում իմ ձեռքը համբուրելու համար, որից ես չէի կարողանում պաշտպանվել», - գրում էր Լեփսիուսը:

Վառնայում վերոնշյալ ամերիկյան ընկերության գործունեության լուծարումից հետո փակման սպառնալիքի տակ էին գտնվում նաև նրա կողմից հիմնված երկու աշխատասրահները, որտեղ մոտ հարյուր աղջիկներ ու կանայք զբաղված էին արևելյան նուրբ գործվածքների պարտաստմամբ: Նավարարիմ այն սկզբունքին, որ մարդկանց դրության բարելավման ամենաարդյունավետ միջոցը աշխատատեղերի ստեղծումն էր, Լեփսիուսը վճռեց այդ արտադրամասերն ամեն գնով պահպանել և, հանձն առնելով Բեռլինում համապատասխան շուկա գտնել, նա այնտեղ աշխատող բանվորուհիներին մի քանի խոշոր պատվերներ տվեց՝ կատարելով նաև նախնական վճարումներ: «Այն, ինչի կարիքը այդ աղքատ և աշխատասեր ժողովուրդն ունի, ողորմությունը չէ,- գրում էր նա իր վերադարձից հետո,- այլ աշխատանքը...»:<sup>13</sup>

Քաղաքի հայերի հետ Լեփսիուսի ունեցած դրամատիկ և տրամադրիչ շփումները<sup>14</sup> վերստին և նորովի փաստեցին այն նախնական ըմբռնումները, որ նա ուներ հայ ժողովրդի բացառիկ ներուժի և ունակությունների վերաբերյալ: «Ով կրեսնի այդ երեխաներին իրենց նուրբ և ինտելիգենտ դեմքերով,- նշում էր նա այդ առթիվ,- և կնկարի նրանց օժտվածությունը, միայն դժգոհությամբ կվերաբերվի այն նախադիմացներին, որոնք ուղղվում են հայ ժողովրդի հասցեին: Եթե մի ռասա իր բնական հատկանիշներով կոչված է դառնալու բարձր մշակույթի կրող, ապա այդ հայկականն է: Եթե նրա բարոյական զարգացումը համաքայլ չի եղել բնականին, ապա այդ կարելի է բացատրել միայն Թուրքիայի դարավոր ճնշմամբ և կողոպտիչ պետական ու րնտեսական հարաբերություններով»:<sup>15</sup>

Չքավորության, սովի և հիվանդությունների դեմ պայքարը ուժերի մեծագույն լարումով շարունակվեց նաև 1897թ-ի աշնանը և ձմռանը: Ընդ

որում այդ ամիսներին հարկ եղավ նույնիսկ անցնել սննդի ամենօրյա բաշխման պրակտիկային, որի միջոցով իրենց գոյությունը պահպանում էին 300-400 մարդիկ: Զուգահեռաբար որբանոցում խնամքի փակ գրավող երեխաների թիվը հասցվեց 300-ի, որոնցից միայն մեկ քառորդն էին որբեր: Մյուսները սերում էին ծայրահեղ աղքատության մեջ գրավող ընտանիքներից, որոնք նրանց համար հոգ փանել չէին կարող: Ուշագրավ է, որ Բեռլինի կոմիտեի՝ այդ քայլը պայմանավորված էր երեխաների ոչ միայն ֆիզիկական, այլև բարոյական փրկության մտահոգությամբ: «Այդ ծանր զրկանքների շրջանում մենք պետք է ջանանք, որ նրանք բարոյական անկման չենթարկվեն, - նշում էր Լեփսիուսը: - Նավանաբար մի քանի ամսից, երբ մեզ կհաջողվի աշխատանքի ավելի լայն հնարավորություններ ստեղծել, կկարողանանք մեր աշխատանքը սահմանափակել այնքան, որ միայն որբերին կխնամենք»:<sup>16</sup>

Աշխարհը և ձմռանը Բուլղարիայում մուլեզնոդ համաճարակների շրջանում կենսականորեն կարևոր նշանակություն ունեցավ նաև դր. Մելիք-Բեգլարյանի գործունեությունը, որը մինչև փարեվերջ 9027 բժշկական փնտրվածությունների ընթացքում կարողացավ սպասարկել 3816 հիվանդների:<sup>17</sup> Նիվանդությունների դեմ նրա հետևողական պայքարի շնորհիվ, որն արդյունավորվում էր Բեռլինից ուղարկված մեծաքանակ խիսնիսի և այլ արժեքավոր դեղորայքների օգտագործմամբ, համաճարակների զարգացումը կասեցվեց, և հազարավոր մարդիկ փրկվեցին անխուսափելի թվացող մահից:

Բուլղարահայության՝ այդ սպառնալից ճգնաժամային դրությունը 1898թ-ի գարնանը սկսեց մեղմանալ, որին զուգահեռ նվազում էր նաև որբանոցի երեխաների թվաքանակը: Պարզ դարձնելու համար, թե այդ որբան արագ էր փրկվում ունենում, կարելի է միայն նշել, որ 1898թ-ի սկզբին որբանոցային հաստատությունում մնացել էին ընդամենը 6 փասնյակ երեխաներ:<sup>18</sup> Իրադրության՝ այդ փոփոխությունները պայմանավորված էին ոչ միայն օգնության աշխատանքների արդյունավետությամբ, այլև, ինչպես դիպուկ կերպով նշում է Լեփսիուսի երկարամյա աշխատակից Ռիխարդ Շեֆերը, այն փաստով, որ «Եվրոպական հողի վրա, բնականոն պետական և փոփոխական հարաբերությունների պայմաններում փախստական հայերը զարմանալի արագ էին մուտք գործում աշխատանքային կյանք, և ընտանիքի՝ իրենց ցայտուն ըմբռնողությամբ նույնիսկ հեռավոր ազգականները, հենց որ սնունդ և բնակարանային պայմաններ էին ձեռք բերում, որբացած երեխաներին փանում էին իրենց ընտանեկան միջավայրը...»:<sup>19</sup> Այդ ամենից զատ, սակայն, կար մեկ այլ լրացուցիչ նախադրյալ

ևս. 1898թ-ի սկզբին փախստականների շրջանում ի հայտ եկան հայրենիք վերադառնալու և այնպեղ վերաբնավորվելու ցանկություններ, որոնք, համառոտ լինելով հայությանն իր բնօրրանում համախմբելու՝ Բեռլինի կոմիտեի նպատակներին, վերջինիս կողմից նյութական և բարոյական մեծ աջակցություն գտան: Դր. Մելիք-Բեգլարյանին և նրա գործընկերներին հանձնարարվեց շտապ կերպով կազմակերպել փախստականների վերադարձը դեպի իրենց բնօրրանը:

Ուշագրավ է, որ երբ վերջիններս ձեռնամուխ եղան այդ գործին՝ թուրքական կառավարությունը՝ Վառնայի իր հյուպատոսության միջոցով փորձում էր ամեն կերպ խոչընդոտել ու արգելել դա: Թուրք հյուպատոսը, ինչպես իր նամակներում փողկեպանում էր Մելիք-Բեգլարյանը, սկզբում կարեգործի կերպով հրաժարվում էր փախստականներին վերադարձի թույլտվություն փայ, իսկ այնուհետև դր. Բեգլարյանի և իր աշխատակիցների ակտիվ միջամտությունից հետո համաձայնեց դա միայն միայնակ կանանց թույլատրել: Չնայած այդ ժամանակ վերադարձի դիմում էին կատարել անհամեմատ մեծ թվով փախստականներ, սակայն փորձարկանց, ինչպես նաև ամուսին կամ 12 փարեկանից մեծ արու զավակ ունեցող այրի կանանց համար երկար ժամանակ չէր հաջողվում թույլտվություն ձեռք բերել: «Նա նստած էր այնպեղ, - պատմում էր Մելիք-Բեգլարյանը, - կարմիր, բորբոքված աչքերով, սպառնալից, ինչպես դահիճ: Խեղճ կանայք՝ գունապ, թույլ, հյուծված, գալիս էին: Նրանց ձեռքերը այնպես էին դողում, որ չէին կարողանում անգամ բացել այն կտորը կամ թուղթը, որի մեջ իրենց անձնագիրն էին դրել:... Քարը կհուզվեր, բայց թուրքը մնում էր համր»:<sup>20</sup>

Չնայած թուրքական հյուպատոսության կողմից հարուցվող արգելքներին, Բեռլինի կոմիտեի աշխատակիցները կարողացան փետրվարին հայրենիք ուղարկել առաջին թվով 48 փախստականներին, որոնք առանց բացառության միայնակ կանայք էին:<sup>21</sup> Ներագայում, երբ հաջողվեց թուրք հյուպատոսի դիմադրությունը հաղթահարել, այդ գործընթացն ավելի արագացավ, և արդեն գարնանը, ինչպես Ա. Ամիրխանյանը էր իր՝ մայիսի 16-ի նամակում փողկեպանում, օրական Կ. Պոլիս էին մեկնում 100-150 փախստականներ, որոնց բոլորի ճանապարհածախսը հոգում էր Բեռլինի կոմիտեն:<sup>22</sup> Եթե նկարի առնենք, որ վերադարձի ցանկություն հիմնականում արտահայտում էին սոցիալապես ամենաանապահով փախստականները, ապա պարզ կդառնա, թե այդ որպիսի բեռնաթափում էր նշանակում օգնության աշխատանքների համար: Ուստի հաշվի առնելով նոր զարգացումները՝ Լեփսիուսը, որը դեռ 1897թ-ի վերջին ծրագրել էր Վառնայում գնել մի հողամաս և փրամադրել մի սեփական ընդարձակ որբանոցային

համալիրի շինարարությանը,<sup>23</sup> այդ մտքից հրաժարվեց: 1999թ-ին, երբ Լեփսիուսը տեղեկացավ, որ Ռուսչուկի գերմանական համայնքի ղեկավար պատրոտ Թեոֆոր Վանգենանը սեփական նախաձեռնությամբ հավաքել և իր տանը խնամում էր մի քանի հայ որբերի, նա որբանոցը տեղափոխեց այնտեղ՝ հանձնելով նրա ղեկավարմանը:<sup>24</sup> Եվս երկու տարի անց՝ 1901թ-ի հոկտեմբերին, Վանգենանը պատրաստակամություն հայտնեց միայնակ հոգալ այնտեղ մնացած որբերի խնամքի ծախսերը, ուստի քանի որ բուլղարահայության սոցիալական դրությունն արդեն բավականաչափ կայունացած էր, Լեփսիուսն ու իր գործընկերները նպատակահարմար գրան որբանոցն իր գույքի հետ միասին հանձնել նրան և իրենց բարեգործական աշխատանքները Բուլղարիայում դադարեցնել՝ բոլոր միջոցներն ուղղելով Ուտիայում, Դիարբեքիրում, Կեսարիայում և Խոյում ձեռնարկված հայանպասք աշխատանքների ընդլայնմանը:<sup>25</sup>

Այսպիսով, Բուլղարիայում մոլեզունդ համաճարակների և սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամի տարիներին Բեռլինի կոմիտեն անգերազնահարելի կարևոր դեր ունեցավ այնտեղ հանգրվանած բազմահազար հայ փախստականների գոյապահպանման, իսկ 1898թ-ից նաև նրանց հայրենադարձությունը կազմակերպելու հարցում: Եվ միայն այն փաստը, որ այդ ողջ ժամանակամիջոցում փախստականների շրջանում սովամահության որևէ դեպք չգրանցվեց,<sup>26</sup> պերճախոս վկայությունն էր այն բանի, թե օգնության աշխատանքները որքան արդյունավետ և հետևողականորեն էին տարվում:

1. Amiranjanjanz A., Briefe aus Rumienien und Bulgarien, "Der Christliche Orient", 1900, էջ 87: 20
2. Ա. Ամիրխանյանը հայերենից բացի վարժ տիրապետում էր թուրքերեն, պարսկերեն և գերմաներեն լեզուներին: Կովկասում և Ռուսաստանում ավերարանական քարոզչությամբ զբաղվելու պատճառով նա Պերերբուրգի եկեղեցական սինոդի կողմից քստրովել էր Ուրալ, որտեղից կարողանալով հեռանալ Ֆիլիանդիա՝ մինչև ԳԱԱ-ի հետ համագործակցությունը բնակություն էր հաստատել այնտեղ: Տե՛ս Abraham Amiranjanjanz, "Der Christliche Orient", 1900, էջ 100-102:
3. Անդ փն՝ Berichte uber das deutsche Hilfswerk in Armenien, էջ 281:
4. Անդ:
5. Անդ, էջ 89:
6. Amiranjanjanz A., Briefe aus Bulgarien, "Der Christliche Orient", 1897, էջ 134: Նմանք. Amiranjanjanz A., Briefe aus Bulgarien, անդ, էջ 184:
7. Տե՛ս Berichte uber das deutsche Hilfswerk in Armenien, անդ, էջ 282:
8. Անդ:

9. Schefer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932, էջ 15: Նմանք. Berichte uber das deutsche Hilfswerk in Armenien, "Der Christliche Orient", 1897, էջ 283:
10. Անդ:
11. Տե՛ս Das deutsche Hilfswerk fur Armenien, անդ, էջ 331-332:
12. Անդ, էջ 332:
13. Lepsius J., Ein Besuch in Varna, անդ, էջ 378:
14. Անդ, էջ 381:
15. Անդ, էջ 381:
16. Անդ:
17. Տե՛ս դր. Մելիք Բեգլարյանի նամակը, "Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes", 1898, էջ 23:
18. Անդ, փն՝ Unsere Waisen Kinder in der Turkei, Persien und Bulgarien, էջ 9:
19. Schefer R., Geschichte..., էջ 21:
20. Անդ:
21. Amiranjanjanz A., Aus Warna und Burgas, անդ, էջ 111:
22. Lepsius J., Ein Besuch in Varna, "Der Christliche Orient", 1897, էջ 381:
23. Տե՛ս Der gegenwertige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, "Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes", 1899, էջ 32:
24. Տե՛ս Mitteilung, "Der Christliche Orient", 1901, էջ 196: Նմանք. Schifer R., Geschichte..., էջ 38:
25. Amiranjanjanz A., Was in Bulgarien not thut, "Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes", 1899, էջ 10:

ԱՆՏՈՍՆԵՏԱ ԱՆԳԵՆՈՎԱ

### ՆԱՅ ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ԴԱՐԱՎՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նայելի և բուլղարների միջև կապերը ձևավորվում են դերևս հեռավոր ժամանակներում: Տակավին այդ հին ժամանակից, II դարում Ք. հ. բուլղար ժողովրդի նախահայրերը (պրոտո-բուլղարներ), որոնք ապրել են Կովկասի փարածքում ունեցել են սերտ հարաբերություններ հայ ժողովրդի հետ: Կովկասյան բուլղարների պատմությունը և նրանց գաղութները Մեծ լեռից դեպի հարավ ցայսօր չեն արժանացել լուրջ ուսումնասիրության բուլղար պատմաբանների կողմից: Նիրավի, Կովկասյան ժամանակաշրջանը հանդիսանում է բուլղարական պատմության կարևոր մասը: Այս հողերիում բուլղարների մասին գրված վկայությունները համեմատաբար առաջ են: Բուլղարիայում պատմության այս շրջանը ուսումնասիր-

ված է հերևյալ հեղինակների կողմից Վասիլ Զլարարակի, Դիմիտր Դիմիտրով, Յվերելին Մրեպանով, Պետր Դոբրեվ, Վեսելին Բեշելիեվ, Դիմիտր Անգելով, Պետր Գոլիսկի և այլն: Նշված շրջանի առավել մանրակրկիտ ուսումնասիրությունները պարկանում են պրոֆ. Արանաս Մրամարովին (1997) և Դիմիտր Տարակովին (1999), սակայն անգամ դրանք մասնակիորեն են ընդգրկում այս ժամանակաշրջանը:

Մինչև 1989թ. հարուկ գիտական հետաքրքրության չէր արժանացել վաղ միջնադարում բուլղարների ներկայությունը Կովկասում և Նայսրանում: Այս առթիվ պերճախոս օրինակը ակադեմիկոս Դիմիտր Անգելովի «Բուլղարական ազգության կազմավորումը» մենագրության մեջ րեղ գրած Պետր Կոլեդարովի քարտեզն է: Այս քարտեզի համաձայն Վուսրով բուլղարները հասարակվել էին ոչ թե Նայսրանի հյուսիս արևմտյան մասում, այլ Վանա լճի մոտ (երևի երկու անունների Վուսրով և Վանի միջև հնչյունային ինչ-որ նմանություն կա, և նրանց այնպեղ լինելու հանգամանքը հիմնավորված չէ գիտական ուսումնասիրություններով, այլ հավանական է երկու անունների նմանության հերևանքով): Թեպետ բուլղարական ուսումնասիրողների կողմից վերջին րասը րարիների ընթացքում, մեծացել է հետաքրքրությունը Կովկասի նկարմամբ, սակայն ցայժմ քննության րորձերը լրարժեք պարկեր չեն ներկայացնում հետագուրելու համար րարածաշրջանում դեպքերն ու պրոցեսները և ավելի հարավ ընկած շրջաններում երկրորդից մինչև յոթերորդ դար և այնուհետև րասներորդ դար:

Բուլղարական պարմության մաս կազմող այս կարևոր խնդիրը, կարող է իր լուծումը գրելել շնորհիվ հինգերորդ և հետագա դարերի հայ պարմիչների՝ Մովսես Խորենացի, Եղիշե, Մովսես Կաղանկարվացի, Նովհաննես Դրասխանակերպցի և Նույնպես չաիագանց հարգելի Մարթեոս Ուռհայեցու պարմությունը, Մրեպանոս Օրբելյանի «Պարմութին նահանգին Միսական», Թովմա Արժրունու պարմությունը, Ղազար Փարպեցու պարմությունը, Յովհան Մամիկոնյանի պարմությունը, Վարդան Մեծի պարմությունը, կովկասա-բուլղարական րարեգրությունների հավաքածու «Ջագֆար րարիիսի» և այլ աղբյուրներ, որոնք ամբողջովին կամ պակաս հայրների են բուլղար ընթերցողին կամ պարմարանին: Այս վերոհիշյալ հայկական աղբյուրները մեզ պարկերացում են րաիս Կովկասում հին շրջանում ապրած բուլղարների կյանքի պայմաններին, սովորությունների և հայ ժողովրդի հետ նրանց շրիմների ու կապերի մասին:

Ամենավաղ րեղեկությունները բուլղարների մասին հիշվում են հայոց պարմահայր Մովսես Խորենացու, Նայոց պարմությունն աշխարութ-

յան մեջ: Այս գրքում բուլղարների մասին գրվում է հերևյալը «Իսկ ինքը, արևմուրքից հավաքած բազմությունն արձակելով իջնում է Շարայի սահմանի մուրիկ խորավեր րեղերը, որ հին մարդիկ կոչում էին Անփայր կամ Վերին Բասյան, բայց հետո Բուլղար Վղնդուր Վունդի գաղթականության պարճառով, որ այդ րեղերում բնակվեց, նրա անունով կոչվեց Վանանդ. և (մութակա) գյուղերը նրա եղբայրների և սերունդների սնուններով են կոչվում մինչև այժմ»:<sup>1</sup>

Մովսես Խորենացու պարմության համաձայն Արշակ թագավորի իշխանության ժամանակ «Մրա ժամանակ մեծ խռովություններ ծագեցին Կովկաս մեծ լեռան գուրիներում, բուլղարների աշխարհում և նրանցից շարերը հեռանալով եկան մեր աշխարհը և բնակվեցին Կողից ներքև արգավանդ և հացառար րեղերում երկար ժամանակ»:<sup>2</sup>

Ինչպես Խորենացին վկայում է, բուլղարական մեծ խմբեր բնակություն են հասարակել Նայսրանի Անփայր և Վերին Բասն գավառներում իրենց մեծ առաջնորդ Վինինդի<sup>3</sup> գլխավորությամբ: Իսկ Նովհանյանի<sup>4</sup> կարճիքով այն բուլղարները, որոնք բնակվել էին այս շրջանում հետագայում մոռանում են իրենց անունները և սկսում են իրենք իրենց անվանել իրենց առաջնորդի անունով: Նետր այս շրջանում ապրողները միանում են և կոչվում են Վանանդ: VII դարում մի խումբ բուլղարներ հասնում են մինչև Դանուբ գետի արևմտյան մասը խան Ասպարուիսի առաջնորդությամբ: Մի ուրիշ խումբ առաջանում է դեպի հյուսիս-արևելք և բնակություն է հասարարում Վար Կամայում և Միջին Վուգայում, իսկ երրորդ խումբը մնում է Վանանդում:

Նայ ժողովուրդը՝ ունենալով լավ գարկացած մշակույթ, բազմաթիվ րնրեսական կապեր է հասարարում հարևան ժողովրդների հետ: Մերպ կապեր է հասարարում նաև պրորո-բուլղարական ցեղերին պարկանող բուր խմբերի հետ:<sup>5</sup> Կան րեղեկություններ, ըստ որոնց, հայկական մեծ համայնք գոյություն է ունեցել բուլղարների Բուգար քաղաքում, որրեղ հետագայում նվաճվել է խագարների կողմից:<sup>6</sup>

Բուլղար և հայ ժողովրդի միջև սերպ կապերը ավելի են գարգանում, երբ բուլղարների մի մասը հասարարվում է Բակկանյան թերակղզիում: Նամակներոնացված բուլղարական երկրի հասարարման գորճրևացը VII դարում ուղեկցվել է պարերագմներով և բուլղարա-սլավոնական ցեղերի անցումով դեպի Փոքր Ասիա: Բյուզանդացի պարմագետ Թեոփանը վկայում է, որ 664-թվականին շուրջ հինգ հագար սլավոններ գաղթեցին Փոքր Ասիա: Այս Նույն հեղինակի համաձայն VIII դարում մեծ թվով սլավոններ Բակկանյան թերակղզուց գաղթեցին Փոքր Ասիա բյուզանդական



և բուլղարական կործանիչ պատերազմների հետևանքով, որոնք մոտ 40 տարի շարունակվեցին և Բուլղարիայի անկախության կորստյան պատճառ հանդիսացան 1018 թվին: Այնուհետև սլավոնական նոր խմբեր շարժվեցին դեպի Փոքր Ասիա:

Այսպես, բուլղար ժողովրդի ու երկրի ձևավորումից շատ ժամանակ առաջ, հենց սկզբից, հայ ժողովուրդը կապեր է ունեցել պրոպո-բուլղարական ցեղերի հետ: Այս կապերը էլ ավելի են սերտանում Բալկանյան թերակղզիում բուլղարական պետության կազմավորումից հետո: Ներագայում այս հարաբերությունները փոխափոխվում են Բալկանյան թերակղզին, քանի որ հայկական գաղթը դեպի Բուլղարիա և բալկանյան այլ երկրներ անհամեմատ ավելի մեծ էր, քան բուլղարների գաղթը դեպի Փոքր Ասիա և Հայաստան:

Միջին դարերում հայերի ներկայության հարցը, որպես էթնիկական տարր բուլղարական երկրում, միշտ դուրս է մնացել բուլղար պատմագետների ուսումնասիրության ոլորտից: Պատմական գրականության մեջ, հայերը հիմնականում հիշատակվում են բյուզանդական կայսրերի VIII–Xդդ. գաղութարարական գործունեության և Բուլղարիայում Պավլիկյանների երևան գալու կապակցությամբ: Բալկանյան թերակղզիում XI–XIVդդ. ընկած ժամանակաշրջանի դեպքերի վերլուծությունից, առավել ուշադրություն է դարձվում III խաչակրաց արշավանքին և Կարդյան թագավորի պատերազմներին լատինների դեմ թրակիայում: Ավելի ուշ XIII–XIV դարերում աղոտ փեղեկություններ կան հայերի գոյության մասին մի քանի բուլղարական քաղաքներում: Բացի սրանից, հայերով բնակեցված շատ վայրեր, որոնք սովորաբար մտել են բուլղարական պատմության մեջ, նշված են, որպես թրակական կամ հարավ մակեդոնական վայրեր:

Ավելի մեծ կամ փոքր հետաքրքրություն հայերի (և Պավլիկյանների) դերի և կարևորության մասին բուլղարական հողերում ցուցաբերեցին փորձեր հեղինակներ Սուրեն Նովնանյան, Հրաչ Բարսիկյան, Վ. Ա. Նաբոթյունովա-Ֆիդանյան և Աշոտ Աբրահամյան, Նակոբ Զյուրդյան (Իփախայում), Նիկողայոս Ադոնց (Բելգիայում) և Բուլղարիայում մի քանի բուլղար և հայ գիտնականները, ինչպես Դիմիտր Անգելովը, Միլտո Յովկովը, Ներսես Ղասաբյանը, Արա Մարկոսը, Ստեփան Ագուբյանը, Նելլի Չանեվա-Դեչևսկար, Նակոբ Օրմանջյան, Միլադին Ապոստոլով, Նակոբ Կարապետյան, Եվգենիա Միցեվա, Կարո Հայրապետյան, Միհրան Պողոսյան, Ե. Մելյան և ուրիշներ: Այլ և այլ պատճառներով, այս հեղինակների մեծ մասը ոչ անմիջականորեն, երբեմն էլ պատահականորեն անդրադարձել և քննել է միջնադարում հայերի ներկայությունը բուլղարական

հողերում: Նրանք այս պրոբլեմը քննել են լույս անհավասարապես ստանդարտ փեղեկություն փալու հայերի գաղթերի մասին բուլղարական հողերում, Բաչկովո վանքի պատմության, հայ բժիշկ Ամիրթովլաթ Ամասիացու գործունեության մասին Պլովդիվում, Մամվիլ թագավորի հայկական ծագումի հավանականության վերաբերյալ, հայ հեղինակների և թարգմանությունների մասին և այլն: Այս հեղինակների կարևոր մասը բուլղարիայում ուսումնասիրում է պատմության ավելի ուշ ժամանակաշրջան. այսինքն բուլղարական հողերում հայ գաղութների զարգացումը միջնադարում և դրանց հետ կապված մշակութային հարցեր, որտեղ միջնադարը նրանց համար մեկնակետ է և ոչ թե լուրջ ուսումնասիրության առարկա: Սրանք հարկապես վերաբերում են փեղեկական կոնկրետ ուսումնասիրություններին, կամ էլ կապված են նոր և արդի ժամանակներում բուլղարիայում հայերի կեցության և մշակութային հարցերի հետ: Նույնիսկ Սուրեն Նովնանյանի և Աշոտ Աբրահամյանի աշխատանքներում, որոնք մանրամաստրեն ուսումնասիրում են միջնադարում հայերի ներկայությունը բուլղարական հողերում, հանդիպում ենք բացթողումների, որոնք այսօրեղ Բուլղարիայում հեշտությամբ կարելի է լրացնել:

Ստացած փեղեկությունների համաձայն, հայկական առաջին զանգվածային գաղթերը սկսած են դեռևս V դարում: 451 թվականին հայերի և պարսիկների միջև փեղի ունեցած Վարդանանց (ազգային հերոս Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ) պատերազմից հետո, Արտավան և Գագրիկ իշխաններն իրենց ջոկատներով անցնում են Բյուզանդիա: Ավելի ուշ, Լեո I կայսրը (457-474) որոշում է Մակեդոնիայի Նիքեա քաղաքը որպես գաղթականների գաղթավայր: Մի այլ հայկական գաղթ Բյուզանդիա հիշատակվում է 542-ին: Պատմաբան Պրոկոպիոս Կեսարացու համաձայն, բյուզանդա - պարսկական պատերազմի ժամանակ հայերի զգալի թվաքանակ անցնում է բյուզանդական կայսրության կողմը: Հուսփինյանու I կայսրը ընդունում է նրանց և հաստատում Կոստանդնուպոլսում, Թրակիայում և Մակեդոնիայում:<sup>7</sup>

Հայերի արտաքսման մշտական և սիստեմատիկ քաղաքականությունը դեպի Բալկանյան թերակղզի հասցրեց նույնիսկ բյուզանդացի կայսր Մորիկի (582-602) հայկական ծագում ունենալու հանգամանքին՝ ըստ հայ պատմիչ Սեբեոսի այս կայսրը Պարսկաստանի Խոսրով II արքայից արքային ուղարկած հռչակավոր նամակում, ծրագիր է առաջարկում, ըստ որի, միասնական բյուզանդա-պարսկական ջանքերով ապագայնացնել Հայաստանը:

Այս ժամանակ հույն կայսր Մորիկը հրամայեց մեղադրական նամակ գրել պարսից թագավորին բոլոր հայ իշխանների դեմ: Նա ասում է այս մարդիկ համառ և անհնազանդ են, նրանք ապրում են մեր մեջ և փագնապ են փարածում: Թող որ ես վերցնեմ ինը (հայերին) և ուղարկեմ Թրակիա, դու նույնպես վերցրու բոնը և հրամայիր, որ նրանց ուղարկեն արևելք: Ռոբվիեդը եթե նրանք մեռնեն թշնամիները կմեռնեն, իսկ եթե ուժ մեկին սպանեն թշնամուն կսպանեն, և մենք հանգիստ կապրենք: Ինչքան ժամանակ նրանք իրենց երկրում են, այդքան ժամանակ մենք չենք կարող հանգստանալ:՝<sup>8</sup>

Համաձայն իր քաղաքականության, Մորիկը հրամայում է Հայաստանում երկու հեծյալ գունդ կազմել 589-590թթ. և նրանք Թրակիա ուղարկել: Մի գնդի առաջնորդ ընտրվեց նախարար Սահակ Մամիկոնյանը, իսկ մյուսի նախարար Սմբատ Բագրատունի: Սահակ Մամիկոնյանը իր գունդը փանում է Կ.պոլիս, սակայն Սմբատ Բագրատունու գունդը ապստամբում է և մերժում է առաջ գնալ պարճառաբանելով, որ ավելի լավ է զինվորները մնան փունը և մեռնեն հայոց հողի վրա, քան կռվել օտար հողում և մեռնեն այնտեղ:՝<sup>9</sup>

Հայկական գնդի ապստամբությունը չի հանդիսանում լուրջ արգելք Հայաստանում խափանելու նոր բյուզանդական զինահավաքի կազմակերպումը: 602 թվականին Մորիկը հրովարտակ է հրատարակում, որի համաձայն Հայաստանը իբրև հարկ, պետք է հատկացնի 30 000 զինվոր և իրենց ընտանիքների հետ ուղարկել Թրակիա ավարներին և բուլղարներին ետ մղելու համար: Պաշտոնյա Պրիսկը ուղարկվում է Հայաստան փեղում հրովարտակը կիրառելու, սակայն այս ընթացքում Մորիկը գահընկեց է լինում Դանուբյան գնդի ապստամբության պատճառով և 150 000 հայերի արտաքսման հսկայական պլանը չի իրագործվում:

X-րդ դարից հետո, Պավլիկյան շարժումը Բուլղարիայում մեծանում է, որի հետևանքով շարք հայեր բնակություն են հաստատում Օսըմ գետի հովիտի երկարությամբ, Պլովդիվ և Կարլովո քաղաքների միջև ընկած վայրում, իսկ XII-ից դարից հետո, նաև Դանուբ գետի երկարությամբ և Բուլղարիայի հյուսիսում: X-րդ դարում, հաստատվում են մի քանի հայկական գաղութներ և ձևավորում են հայկական եկեղեցական առաջնորդություն:

Գաղթականության պրոցեսը նույնպես շարունակվում է արաբների, պարսիկների և թուրքերի հաճախակի հարձակումների ժամանակ և հատկապես թուրք-պարսկական պատերազմի ընթացքում՝ XVII-րդ դարի սկզբին, երբ փնտրեաական և քաղաքական ճգնաժամ է փրկում Հայաստան:

նում:՝<sup>10</sup> Հայերի հոսքը դեպի Բուլղարիա հեշտանում է դրանով, որ երկու ժողովուրդները լինելով սրբկության մեջ, եղել են նույն Օսմանյան կայսրության հայափակ: Անկախությունից հետո 1884 թվականին կապարած պաշտոնական մարդահամարի փվյալների համաձայն, հայերի թվաքանակը Իշխանական Բուլղարիայում եղել է 4000, իսկ Արևելյան Ռումելիայում (Բուլղարիան բաժանված էր երկու մասի) 1300:՝<sup>11</sup>

Հայերի մյուս զանգվածային գաղթը դեպի Բուլղարիա փեղի ունեցավ 1896-1915թթ. ցեղասպանություններից հետո: 1919-1922թթ. հույն-թրքական պատերազմից հետո, հայերն ստիպված են լինում հեռանալ թրքերից փրկվելու համար: 1922 թվականին Բուլղարիայի թագավոր Բորիս III-ի կառավարությունը հրաման է փալիս, որ Բուլղարիայի սահմանները բացվեն փախստական հայերի համար նրանց ապաստարան փալով: այս ընթացքում Բուլղարիա են գաղթում 25 000 հայ:՝<sup>12</sup> Բուլղարիայում ապաստան գրած հայերը շուրտվ հաստատվում են նոր վայրին և կյանքին դառնալով երկրի անբաժանելի մի մասնիկ, միևնույն ժամանակ պահպանելով իրենց ինքնությունը, սովորույթները և ազգային ինքնագիտակցությունը:

Կա ևս մի կարևոր ասպեկտ հայ-բուլղարական կապերի, այն է հայերի մասնակցությունը բուլղար ժողովրդի ազատագրական պայքարում թրքերի դեմ: Այս ժամանակ եկեղեցու հետ կապված հարցը, դառնում է ինչպես Խրիստո Բոթեվն (բուլղար մեծ բանաստեղծ և հեղափոխական) է ասում, քաղաքական և ազգային էական հարց: Բուլղարիայում ապրող հայերը մասնակցում են բուլղարների հետ հանուն եկեղեցվո բուլղարների մղած մարտերում. նույնիսկ երբեմն դարձել նրանց ներշնչողները: Հայկական փախստիկները Կ.պոլիսում Տ. Դավիթյան, Ա. Մինասյան, Ա. Բոյաջյան, Դ. Արամյան և ուրիշներ փալում և փարածում են բուլղարներն լեզվով բազմաթիվ գրքեր և պարսավագրեր, որոնք մղում են ժողովուրդը ապստամբելու հունական եկեղեցու և նրա բուլղար ծառայողների դեմ:

Հայ հոգևորականությունը և այնուհետև Կ.պոլիսի պատրիարք Մկրտիչ Խրիմյանը նույնպես մասնակցում էին Բուլղարիայում հայտարարված եկեղեցական պատերազմին: Նա (պատրիարքը) հաճախ խորհուրդ էր փալիս բուլղար հոգևորականությանը զգույշ լինել, երբ բողոք են ներկայացում թուրք կառավարության կամ հույն հոգևորականների դեմ: Նա նույնիսկ հաստատում է իր դիրքորոշումն այն մասին, թե «ինչպես ուրիշ ժողովուրդ, այնպես էլ բուլղարները իրավունք ունեն ունենալ անկախ եկեղեցի և հոգևոր առաջնորդ»՝<sup>13</sup> Ազգային շարժման զարգացման և ուժեղացման հետևանքով թուրքական կառավարությունը ստիպված է լինում դիմել զի-

շումների: 1870 թվականի փետրվարի 28-ին սուլթանը հրամանագիր է փալիս, որի համաձայն թույլ է փրվում բացարձակապես հաստատվել ինքնուրույն և անկախ բուլղարական եկեղեցական կենտրոն - էկզարխություն (հովվություն): 1872թ. բուլղարական հովվությունը վերջնականապես ճանաչված է լինում և առաջին անգամ էկզարխ է նշանակվում Անտիոքի: Նորաստեղծ բուլղարական էկզարխիան հաստատվում է Կ.պոլիսի հայերով բնակեցված մի շրջանում Օրթագյուղում. Իսկ Մկրտիչ Խրիմյանը առաջինն էր, որ պաշտոնապես ճանաչեց բուլղարական եկեղեցվո անկախությունը և սերտ կապեր հաստատվել բուլղարական հովվության հետ:<sup>14</sup>

Նայ-բուլղարական կապերը շարունակում են ուժեղանալ ռուս-թուրքական ազատագրական պայքարագմի փորձերին 1877-1878թթ.: Նրանք երկու ժողովուրդները, այս պայքարագմը համարեցին միակ պայքարի հնարավորությունը, իրենց երկրները ազատագրելու թրջական սպրկությունից: Ինչպես ռուսական բանակում ծառայող մեծ թվով հայեր, այնպես էլ Բուլղարիայում ապրող հայերը մասնակցեցին ռուս-թուրքական (1877-1878) պայքարագմին:

Այս հարցը ոչ միայն կապված է երկու ժողովուրդների պայքարության, այլ նաև նրանց մշակույթների հետ: Ներաբերքի է, հետևել նրանց միջև մշակութային հարաբերությունների զարգացմանը և իմանալ ինչպիսի կարծիք են ունեցել միմյանց նկատմամբ:

Ընդանրապես, բուլղարացիների մոտ գերիշխող է այն կարծիքը, թե նրանք ճանաչում են հայերին: Տիրավի, որոշ չափով սա այսպես է: Բացի ուղիղ, անմիջական շփումներից և գաղափար կազմելու համար այս հարցում (փվյալ դեպքում հայերի մասին), նրանք օգնում են մի քանի փապագրական հրատարակություններին, ինչպես թերթեր և գրական սրեղծագործություններ. այդ մասին վառ օրինակ է հայերեն գրականություն ներկայացնելու փորձը բուլղար ընթերցողին, նույնպես բուլղարական գրականություն հայ ընթերցողին: Դժբախտաբար այս գործընթացը բավական մեղմացել է: Բուլղարիայի համար, որպես ակտիվ ժամանակաշրջան կարող ենք համարել XX դարի 30-40 ական թվականները: 1960-ական թվականներին հայերենից բուլղարերեն են թարգմանվում մի քանի հայ գրողների և բանաստեղծների երկերը - Բաճիկ, Ծիրվանագաղեի, Վահան Թորոմենցի, Միլվա Կապուրիկյանի, Եղիշե Զարենցի, Նահապետ Բուզակի և այլն: 1975-ին բուլղարերենով լույս է տեսնում «Նայկական պայքարագմերի» մի ժողովածու, ընդգրկելով 53 գրողների գործերը: Չնայած գործունեության անբավարարության, սակայն որոշ գաղափար է փալիս մեր մեջ ապրող հայերի և նրանց մշակութային պայքարության մասին:

Նոր փալի գործիչներ են այն հայերը, որոնք ծնվել են և գրում են Բուլղարիայում: Նրանց սրեղծագործության թեման կապված է Նայաստարանի հետ (Սևդա Սևան) կամ հայկական ոգու հետ (Նակոբ Մելքոնյան, Գրիգոր Փափագյան և ուրիշներ):

Շուրով սկսեցին մի շարք ուսումնասիրություններ բուլղարա-հայկական կապերի մասին: Այս կապակցությամբ «Պարմական, մշակութային և գրական կապերը բուլղարների և հայերի միջև» (Ջինգոզյան, Գրիգորյան) ժողովածուն առաջին գործերից է, որտեղ ներկայացված են երկու ժողովուրդների միջև համագործակցության փարբեր ոլորտներ, մեր կապերը դարերի ընթացքում, կամավոր հայերի մասնակցությունը Բալկանյան պայքարագմներում, հայկական ճարտարապետության արտացոլումը բուլղարական միջնադարյան ճարտարապետության վրա, հայ բժիշկների գործունեությունը Բուլղարիայում անկախությունից հետո, հայ-բուլղարական գրական կապերը և այլն:

Մեկ այլ հետաբերքի հանգամանք ևս: Բուլղարական մամուլում ներկայացված հայերի կերպարը: Այս կապակցությամբ հատուկ հետաբերքություն է ներկայացնում 1941թ. 27 ապրիլի «Երթ» թերթի 59/63 համարը: Ամբողջ համարը նվիրված է հայերի պայքարության, գրականության, հայոց եղեռնին և Բուլղարիայում ապրող հայերի կյանքին: Այս հոդվածները արտացոլում են բուլղար ժողովրդի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Առաջին էջը նվիրված է եղեռնին: Հոդվածը գրված է Մոֆիայի եպիսկոպոս Ստեփանի կողմից, որն ասում է «գարմանահրաշ մի նմանություն միացնում է հայերին և բուլղարներին ընդհանուր, խոր և ողբերգական ճակատագրով...»: Նա նկարագրում է իր խոր զգացմունքները հայոց ողբերգության և Եվրոպայի անփարբերության նկատմամբ:

Նույն թերթի առաջին էջի վրա փապված մեկ այլ հետաբերքի հոդված «հայերը Բուլղարիայում» Կ. Դինոլովի հեղինակությամբ է: Այս հոդվածը ուսումնասիրում է հայերի գաղթերը Բուլղարիա: Նեղինակը գրում է «Նայերը Բուլղարիայում ճանաչված են որպես երկրի համեստ, խաղաղ, լավ և շար աշխատասեր քաղաքացիներ: Նրանք բուլղարներին համահավասար սիրում և աշխատում են Բուլղարիայի համար»:

Այս համարում, գրված հոդվածներ կան ինչպես բուլղարների, այնպես էլ հայերի կողմից հայ գրականության, պայքարության, կյանքի և սովորույթների մասին: Այն փաստը, որ ամբողջ թերթը նվիրված է հայերին, խոսում է երկու ժողովուրդների միջև եղած կապերի և իրար նկատմամբ փառած զգացմունքների մասին: Սրանք լոկ չնչին մասն են այն բուլղարից,

որ գրված են մեր երկու ժողովրդների բարեկամության մասին: Սակայն, կարծում եմ, այդ չնչին գրվածներն էլ խոսում օրինակներ են:

1. Մովսես Խորենացի, «Նայոց պատմություն», Երևան, 1982, էջ 123:
2. Նույն փեղում, Երևան, 1982, էջ 135:
3. Նույն փեղում, Երևան, 1982, էջ 123:
4. Ս. Նովանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 20:
5. Ս. Նովանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 20:
6. Մմիռնով Ա. Պ., Վոլկային բուլղարները, Մոսկվա, 1951, էջ 189-190:
7. Աբրահամյան Աշոփ, Նամատոփ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն, հ. 1, Երևան, 1984, էջ 310:
8. Մերետս «Մերետս եպիսկոպոսի պատմությունը Ներակլի մասին» (ռուսերեն), Մոսկվա 1862, էջ 52:
9. Աբրահամյան Աշոփ, Նամատոփ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն, հ. 1, Երևան, 1984, էջ 311:
10. Ս. Նովանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 5:
11. Ս. Նովանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 164-165:
12. Միցեվա Ե., Նայերը Բուլղարիայում – մշակույթ և ինքնություն, էջ 25:
13. Ս. Նովանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 83-88:
14. Ս. Նովանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 83:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Բարկեն Նարությունյան</b>	
Նայ թագավորները բուլղարական գահին.....	3
Цари-армяне на болгарском троне.....	6
<b>Ռուբեն Սաֆրաստյան</b>	
Օսմանյան կայսրություն, 1876.	
ցեղասպանության ծրագրի առաջացումը.....	9
<b>Արամ Խաչատրյան</b>	
Նայերի մասնակցությունը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին 19-րդ դարի II կեսին .....	17
<b>Նասմիկ Սյրեվանյան</b>	
Նայաբառ թուրքերեն հրատարակությունները և Պոլիս-բուլղարահայ մշակութային հարաբերությունները 19-րդ .....	28
<b>Նովհաննես Գրիգորյան</b>	
Նայ-բուլղարական զինական համագործակցությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին.....	34
<b>Գեղամ Բաղայան</b>	
Բուլղարիայի հայկական գաղթավայրերը (սկզբնավորման շրջնից մինչև XX դարի սկիզբը) .....	41
<b>Էդիկ Մինասյան</b>	
Նայ-բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ.....	48
<b>Էդուարդ Գրիգորյան</b>	
Лексико-грамматическая характеристика субстантивных фразеологизмов в русском и болгарском языках.....	63
<b>Ռադոսլինա Ստոյանովա</b>	
Болгаристика в Ереванском государственном университете .....	67
<b>Վարեն Նակոբյան</b>	
Функции частицы “Же” в старославянском тескте.....	74
<b>Դիանա Մանուկյան</b>	
Патриотическая лирика Пейо Яворова в переводах русских поэтов .....	81

<b>Կարինե Սամվելյան</b>	
Պեյո Յավերովի սրեղծագործությունները հայ-բուլղարական մշակութային կապերի առանցքում .....	98
<b>Սամվել Մուրադյան</b>	
Պեյո Յավերովի «Հայերը» բանաստեղծությունը և նրա հայերեն մի թարգմանությունը .....	102
<b>Գոհար Արովյան</b>	
Стихотворение “Армяне” Пейо Яворова .....	109
<b>Աննա Ասաբրյան</b>	
Բուլղար երգչուհի Ռոզալի Պենկյանը և Տ. Չուխանյանի «Լերլերիջի Նոր-հոր աղա» օպերան .....	116
<b>Կարինե Խոտարաշյան</b>	
Болгария-Армения. народная песня в аспекте сравнительного музыкознания. ....	125
<b>Նազենիկ Սարգսյան</b>	
Опыт слогометрического анализа сочетания хореографических и музыкальных элементов .....	134
<b>Աշոտ Հայրունի</b>	
Հայ փախստականները Բուլղարիայում 1896-1900 թթ. ....	148
<b>Անտրանեսյա Անգելովա</b>	
Հայ-բուլղարական դարավոր հարաբերությունները .....	155

**ՀԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.  
ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիտաժողովի զեկույցների ժողովածու

Համակարգչային ձևավորող՝ Ն.Օ. Խնկիկյան

Ստորագրված է տպագրության 17.04.2009 թ.:  
Չափեր՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 8.5 մամուլ,  
տպագր. 10.5 մամուլ= 9.8 պայմ. մամուլի:  
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 40:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի  
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1: